

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի մայիսի 21-ի 2008/50/ԵՀ
հրահանգ**

Մթնոլորտային օդի որակի ու Եվրոպայում առավել մաքուր օդի մասին

Պաշտոնական տեղեկագիր, L 152, 11.06.2008թ., էջեր 0001 - 0044

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի մայիսի 21-ի 2008/50/ԵՀ
հրահանգ**

Մթնոլորտային օդի որակի ու Եվրոպայում առավել մաքուր օդի մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը¹,

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը²,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան³,

¹ ՊՏ C 195, 18.08.2006թ., էջ 84:

² ՊՏ C 206, 29.08.2006թ., էջ 1:

³ Եվրոպական պառլամենտի 2006 թվականի սեպտեմբերի 26-ի եզրակացություն (ՊՏ C 306 E, 15.12.2006թ., էջ 103), Խորհրդի 2007 թվականի հունիսի 25-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 236 E, 06.11.2007թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2007 թվականի դեկտեմբերի 11-ի դիրքորոշում: Խորհրդի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշում:

Քանի որ

- 1) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 22–ի 1600/2002/ԵՀ որոշմամբ⁴ ընդունված Համայնքի շրջակա միջավայրի գործողությունների վեցերորդ ծրագրով սահմանվում է, որ անհրաժեշտ է աղտոտումը հասցնել այնպիսի մակարդակի, որը կնվազեցնի մարդու առողջության, հատկապես խոցելի բնակչության, ինչպես նաև, ամբողջությամբ վերցրած՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը, խթանել օդի որակի դիտանցումը և գնահատումը, այդ թվում նաև՝ աղտոտիչների նստեցումը, ինչպես նաև՝ հանրությանը տեղեկություններ տրամադրելը,
- 2) մարդու առողջությունը և ամբողջությամբ վերցրած՝ շրջակա միջավայրը պաշտպանելու համար հատկապես կարևոր է պայքարել աղբյուրի մոտ աղտոտիչների արտանետումների դեմ և սահմանել ու իրականացնել արտանետումների կրճատման ամենաարդյունավետ միջոցառումները տեղական, ազգային և Համայնքի մակարդակով: Ուստի, մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի արտանետումներից պետք է խուսափել, կանխել կամ նվազեցնել դրանք, ինչպես նաև համապատասխան նպատակներ սահմանել մթնոլորտային օդի որակի համար՝ հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության համապատասխան չափանիշները, ուղեցույցներն ու ծրագրերը,
- 3) «Մթնոլորտային օդի գնահատման և կառավարման մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 27–ի 96/62/ԵՀ հրահանգը⁵, «Մթնոլորտային օդում ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների, պինդ մարմինների ու կապարի սահմանային թույլատրելի նորմաների մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 22–ի 1999/30/ԵՀ հրահանգը⁶, «Մթնոլորտային օդում բենզոլի ու շմոլ գազի սահմանային թույլատրելի նորմաների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի նոյեմբերի 16–ի 2000/69/ԵՀ հրահանգը⁷, «Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002

⁴ ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

⁵ ՊՏ L 296, 21.11.1996թ., էջ 55: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 (ԵՀ)

կանոնակարգով (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1) փոփոխված հրահանգ:

⁶ ՊՏ L 163, 29.06.1999թ., էջ 41: Հանձնաժողովի 2001/744/ԵՀ որոշմամբ (ՊՏ L 278, 23.10.2001թ., էջ 35)

փոփոխված հրահանգ:

⁷ ՊՏ L 313, 13.12.2000թ., էջ 12:

թվականի փետրվարի 12-ի 2002/3/ԵՀ հրահանգն⁸ ու անդամ պետություններում մթնոլորտային օդի աղտոտումը չափող դիտացանցերի և առանձին դիտակայանների միջև տեղեկությունների ու տվյալների փոխանակման պահանջը սահմանող՝ Խորհրդի 1997 թվականի հունվարի 27-ի 97/101/ԵՀ որոշումը⁹ պետք է հիմնովին վերանայվեն՝ հաշվի առնելով արդի առողջապահական և գիտական զարգացումներն ու անդամ պետությունների փորձը: Հստակության, պարզության և վարչարարության արդյունավետության նկատառումներով, հետևաբար, անհրաժեշտ է, որ նշված հինգ ակտը փոխարինվի մեկ հրահանգով և, անհրաժեշտության դեպքում, կիրարկման միջոցներով,

- 4) «Մթնոլորտային օդում¹⁰ արսենի, կադմիումի, սնդիկի, նիկելի ու արոմատիկ բազմացիկլիկ ածխաջրածինների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի 2004/107/ԵՀ հրահանգի կիրարկման մասով բավարար փորձ ունենալու դեպքում կարելի է դիտարկել դրա դրույթները սույն Հրահանգի դրույթների հետ համատեղելու հնարավորությունը,
- 5) գնահատման ընդհանուր չափանիշներին համապատասխան՝ պետք է մթնոլորտային օդի որակի գնահատման ընդհանուր մոտեցում որդեգրել: Մթնոլորտային օդի որակը գնահատելիս պետք է հաշվի առնել օդի աղտոտման ներգործությանը ենթարկվող բնակչության թիվը և էկոհամակարգերը: Ուստի նպատակահարմար է յուրաքանչյուր անդամ պետության տարածքը դասակարգել ըստ գոտիների կամ ագլոմերացիաների՝ ըստ բնակչության խտության,
- 6) հնարավորության դեպքում պետք է կիրառվեն մոդելավորման մեթոդներ՝ հնարավոր դարձնելով դիտակետերի տվյալների մեկնաբանումը՝ ըստ կոնցենտրացիաների աշխարհագրական բաշխման: Դա հիմք կլինի տվյալ տարածքում բնակվող ներգործության ենթարկվող ընդհանուր բնակչության թիվը որոշելու համար,
- 7) ապահովելու համար, որ օդի աղտոտվածության վերաբերյալ հավաքված տեղեկությունները բավարար չափով ներկայացնեն Համայնքում առկա պատկերը, և որ դրանք համեմատելի են, անհրաժեշտ է, որ մթնոլորտային օդի որակի

⁸ ՊՏ L 67, 09.03.2002թ., էջ 14:

⁹ ՊՏ L 35, 05.02.1997թ., էջ 14: Հանձնաժողովի 2001/752/ԵՀ որոշմամբ (ՊՏ L 282, 26.10.2001թ., էջ 69) փոփոխված հրահանգ:

¹⁰ ՊՏ L 23, 26.01.2005թ., էջ 3:

գնահատման համար կիրառվեն չափումների ստանդարտացված մեթոդներ ու դիտակայանների թվի և տեղակայման որոշման ընդհանուր չափանիշներ: Չափումներից բացի՝ կարող են կիրառվել նաև մթնոլորտային օդի որակը գնահատելու այլ մեթոդներ, և ուստի նման մեթոդների կիրառման ու պահանջվող ճշգրտության ապահովման նպատակով անհրաժեշտ է չափորոշիչներ սահմանել,

- 8) գյուղական վայրերի ֆոնային աղտոտման դիտակայաններում պետք է իրականացվեն միկրոսկոպիկ պինդ մարմինների մանրամասն չափումներ՝ այս աղտոտող նյութի ազդեցություններն առավել լավ հասկանալու և համապատասխան միջոցառումներ մշակելու համար: Այդ չափումները պետք է իրականացվեն «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագրին» (EMEP) համապատասխան, որը մշակվել է Խորհրդի 1981 թվականի հունիսի 11-ի 81/462/ԵՏՀ որոշմամբ հաստատված՝ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» 1979 թվականի կոնվենցիայի շրջանակներում,¹¹
- 9) անհրաժեշտ է պահպանել կամ բարելավել արդեն իսկ առկա օդի որակի մակարդակը: Եթե սույն Հրահանգով սահմանված մթնոլորտային օդի որակի մասով նպատակները չեն իրագործվել, անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար կոնցենտրացիաների սահմանային թույլատրելի նորմաները ու կրիտիկական մակարդակները և, հնարավորության դեպքում, կոնցենտրացիաների անհրաժեշտ արժեքների և երկարաժամկետ նպատակների հետ համապատասխանությունը,
- 10) բուսականության և բնական կենսահամակարգերի համար օդի աղտոտման հետևանքով առկա վտանգը հատկապես կարևոր խնդիր է քաղաքային տարածքներից հեռու գտնվող վայրերում: Բուսականության պաշտպանության նպատակով նշված վտանգների գնահատումը և կրիտիկական սահմանների պահպանումը պետք է հիմնականում իրականացվի կառուցապատված տարածքներից հեռու գտնվող վայրերում,

¹¹ ՊՏ L 171, 27.06.1981թ., էջ 11:

- 11) միկրոսկոպիկ պինդ մարմինները (ՊՄ_{2.5}) լուրջ բացասական ազդեցություն են ունենում մարդու առողջության վրա: Դեռևս գոյություն չունի սահմանված շեմ, որից պակաս լինելու դեպքում ՊՄ_{2.5}-ը վտանգ չի ներկայացնի: Այդ պատճառով, այս աղտոտող նյութը չի կարգավորվելու օդն աղտոտող մյուս նյութերի նման: Ընդհանուր մոտեցումը պետք է նպաստի քաղաքային տարածքներում կոնցենտրացիաների ընդհանուր նվազմանն այնպես, որ բնակչության մեծ մասն ապահովված լինի օդի բարելավված որակով: Այնուհանդերձ, առողջության պաշտպանության նվազագույն մակարդակն ամենուրեք ապահովելու համար այդ մոտեցման հետ մեկտեղ պետք է սահմանվի սահմանային թույլատրելի նորմա, իսկ դեռևս առաջին փուլում պետք է ապահովվի առնվազն նպատակային արժեքի հետ համապատասխանությունը,
- 12) մարդու առողջության և բուսականության ու էկոհամակարգերի վրա օզոնի վնասակար ներգործությունից արդյունավետ պաշտպանություն ապահովող՝ առկա նպատակային արժեքներն ու երկարաժամկետ նպատակները պետք է անփոփոխ մնան: Պետք է սահմանվեն օզոնի զգուշացման և տեղեկացման շեմերը՝ ընդհանուր բնակչությանը և խոցելի խմբերին համապատասխանաբար սահմանային կոնցենտրացիաները գերազանցող կարճաժամկետ արտանետումներից ու օզոնի բարձր կոնցենտրացիաներից պաշտպանելու նպատակով: Այդ շեմերի գերազանցումների դեպքում հանրությունը պետք է տեղեկացվի արտանետումների վնասակար ներգործության ռիսկերի և, անհրաժեշտության դեպքում, զգուշացման շեմերի գերազանցման դեպքում օզոնի մակարդակների նվազեցմանն ուղղված կարճաժամկետ միջոցների իրականացման մասին,
- 13) օզոնը անդրսահմանային աղտոտող նյութ է, որը մթնոլորտում գոյանում է «Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի արտանետումների ազգային թույլատրելի սահմանաչափերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/81/ԵՀ հրահանգով կարգավորվող առաջնային աղտոտող նյութերի արտանետումներից¹²: Սույն Հրահանգով սահմանված՝ օդի որակին առնչվող նպատակների և օզոնի մասով երկարաժամկետ նպատակների ապահովման ուղղությամբ առաջընթացը որոշվում է 2001/81/ԵՀ հրահանգով

¹² ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 22: Խորհրդի 2006/105/ԵՀ հրահանգով (ՊՏ L 363, 20.12.2006թ., էջ 368) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

նախատեսված նպատակային կոնցենտրացիաներին և արտանետումների առավելագույն սահմանաչափերին համապատասխան և, համապատասխան դեպքում, սույն Հրահանգով նախատեսված օդի որակի ծրագրերի իրականացմամբ,

- 14) այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ օզոնի մասով երկարաժամկետ նպատակները կամ այլ աղտոտող նյութերի գնահատման շեմերը գերազանցվել են, ամրակայված դիտակայանից կատարվող չափումները պարտադիր են: Ամրակայված դիտակայանից կատարվող չափումները կարող են զուգորդվել մոդելավորման մեթոդներով և (կամ) ինդիկատիվ չափումներով, որոնք հնարավոր կդարձնեն դիտակետերի տվյալները մեկնաբանել ըստ կոնցենտրացիաների աշխարհագրական բաշխման: Գնահատման օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կտա նաև պակասեցնելու ամրակայված նմուշառման դիտակետերի պահանջվող նվազագույն թիվը,
- 15) բնական աղբյուրներից արտանետումները կարող են գնահատվել, սակայն չեն կարող հսկվել: Ուստի, եթե բնական աղբյուրներից դեպի մթնոլորտային օդ արտանետվող աղտոտող նյութերի ծավալները կարող են համեմատաբար ճշգրտորեն որոշվել, և եթե սահմանաչափերի գերազանցումները ամբողջությամբ կամ մասամբ տեղի են ունեցել բնական աղբյուրներից արտանետումների հետևանքով, օդի որակի սահմանային թույլատրելի նորմաների հետ համապատասխանությունը գնահատելիս դրանք կարող են հանվել՝ սույն Հրահանգով սահմանված պայմաններին համապատասխան: Ձմռանը ճանապարհներին ավազ կամ աղ լցնելու հետևանքով ՊՄ₁₀-ի՝ գերազանցված սահմանային թույլատրելի նորմաներին գումարվող արտանետումների ծավալները նույնպես կարող են հանվել օդի որակի սահմանային թույլատրելի նորմաների հետ համապատասխանությունը գնահատելիս՝ պայմանով, որ պատշաճ միջոցներ են ձեռնարկվել՝ նվազեցնելու համար այդ կոնցենտրացիաները,
- 16) այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ վիճակը հատկապես ծանր է, պետք է հնարավոր լինի հետաձգել օդի որակի սահմանային թույլատրելի նորմաների հետ համապատասխանության ապահովման վերջնաժամկետն այն դեպքերում, երբ, անկախ համապատասխան աղտոտման նվազեցման միջոցառումների իրականացումից, որոշակի գոտիներում և ագլոմերացիաներում այնուամենայնիվ,

գոյություն ունեն սահմանաչափերի հետ համապատասխանության ապահովման լուրջ խնդիրներ: Որևէ գոտում կամ ագլոմերացիայում սահմանաչափերի հետ համապատասխանության ապահովման ժամկետի ցանկացած հետաձգում պետք է հիմնավորվի Հանձնաժողովի կողմից գնահատված համապարփակ ծրագրով՝ վերանայված վերջնաժամկետի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Արտանետման աղբյուրների տեղակայման վայրում արտանետումները մինչև «Աղտոտման մասին» թեմատիկ ռազմավարությունում նախանշված ցանկայի մակարդակը նվազեցնելուն ուղղված՝ Համայնքի մակարդակով միջոցների առկայությունը կարևոր է սույն Հրահանգով սահմանված ժամկետում արտանետումների արդյունավետ կրճատման համար և պետք է հաշվի առնվի համապատասխանության ապահովման վերջնաժամկետները հետաձգելու դիմումները գնահատելիս,

- 17) աղտոտման աղբյուրներից արտանետումների կրճատմանն ուղղված՝ Համայնքի մակարդակով իրականացվող անհրաժեշտ միջոցները, մասնավորապես արտադրական արտանետումների մասին Համայնքի օրենսդրության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված, ծանրաքարշ ավտոմեքենաներում տեղադրված շարժիչներից դեպի մթնոլորտ արտանետումները սահմանափակող, անդամ պետությունների՝ հիմնական աղտոտող նյութերի արտանետումների ազգային թույլատրելի մակարդակը, բենզալցակայաններում բենզինի շարժիչով աշխատող մեքենաները լիցքավորելու գործընթացի հետ կապված արտանետումներն էլ ավելի նվազեցնող միջոցները պետք է պատշաճորեն ուսումնասիրվեն ներգրավված բոլոր հաստատությունների կողմից,
- 18) այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ մթնոլորտային օդում աղտոտող նյութերի կոնցենտրացիաները գերազանցում են համապատասխան օդի որակի նպատակային արժեքները կամ սահմանային թույլատրելի նորմաները, ինչպես նաև, համապատասխան դեպքում, ցանկացած ժամանակավոր թույլատրելի մարժա, պետք է մշակվեն օդի որակի պահպանության ծրագրեր: Օդն աղտոտող նյութերն արտանետվում են աղտոտման տարատեսակ աղբյուրներից և տարբեր գործունեությունների հետևանքով: Տարբեր քաղաքականությունների միջև փոխկապակցվածությունն ապահովելու համար օդի որակի նման ծրագրերը պետք

է, հնարավորության դեպքում, լինեն հետևողական, և ինտեգրված լինեն «Այրման խոշոր կայաններից որոշ աղտոտող նյութերի՝ դեպի մթնոլորտ արտանետումները նվազեցնելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/80/ԵՀ հրահանգին¹³, 2001/81/ԵՀ հրահանգին և «Շրջակա միջավայրի աղտոտման գնահատման ու կառավարման վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի 2002/49/ԵՀ հրահանգին¹⁴ համապատասխան մշակված պլաններում և ծրագրերում: այն դեպքերում, երբ արտադրական գործունեության համար թույլտվությունները տրվում են «Աղտոտման համատեղ կանխման ու վերահսկման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 2008/1/ԵՀ հրահանգին¹⁵ համապատասխան, պետք է հաշվի առնվեն նաև սույն Հրահանգով նախատեսված մթնոլորտային օդի որակին առնչվող նպատակները:

19) Եթե առկա է մեկ կամ ավելի աղտոտող նյութերի զգուշացման շեմերի գերազանցման վտանգ, ապա պետք է մշակվեն կարճատև ժամկետում ձեռնարկվելիք միջոցներ սահմանող գործողությունների ծրագրեր՝ նշված վտանգը նվազեցնելու և դրա տևողությունը կրճատելու համար: Եթե վտանգը վերաբերում է մեկ կամ ավելի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի նորմաների կամ նպատակային արժեքների գերազանցմանը, անդամ պետությունները կարող են, հարկ եղած դեպքում, մշակել նման կարճաժամկետ գործողությունների ծրագրեր: Օգոնի մասով նման կարճաժամկետ գործողությունների ծրագրերում պետք է հաշվի առնվեն «Մթնոլորտային օդում գետնամերձ օգոնի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002/3/ԵՀ հրահանգի իրականացման ուղեցույցներին վերաբերող՝ Հանձնաժողովի 2004 թվականի մարտի 19-ի 2004/279/ԵՀ որոշման դրույթները,¹⁶

20) անդամ պետությունները միմյանց հետ խորհրդակցում են եթե, այլ անդամ պետությունում ծագող նշանակալի աղտոտումից հետո աղտոտող նյութերի մակարդակը գերազանցում կամ կարող է գերազանցել օդի որակին առնչվող

¹³ ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1: Թիվ 2006/105/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ:

¹⁴ ՊՏ L 189, 18.07.2002թ., էջ 12:

¹⁵ ՊՏ L 24, 29.01.2008թ., էջ 8:

¹⁶ ՊՏ, L 87, 25.03.2004թ., էջ 50:

համապատասխան նպատակները, ինչպես նաև, կիրառելիության դեպքում, թույլատրելի մարժան կամ, համապատասխան դեպքում՝ զգուշացման շեմը: Որոշակի աղտոտող նյութերի, ինչպես, օրինակ, օզոնի և պինդ մարմինների անդրսահմանային բնույթը, հարևան անդամ պետություններին կարող է ստիպել համատեղ համակարգել դրանց վերաբերյալ օդի որակին առնչվող ծրագրերի, կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակումն ու իրականացումը և հանրության իրազեկումը: Անդամ պետությունները հարկ եղած դեպքում պետք է համագործակցեն երրորդ երկրների հետ՝ հատկապես կարևորելով թեկնածու երկրների վաղ ներգրավումը,

- 21) անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է հավաքեն, փոխանակեն և տարածեն օդի որակի մասին տեղեկություններ՝ օդի աղտոտման հետևանքների մասին առավել լավ տեղեկացված լինելու և պատշաճ քաղաքականություններ մշակելու նպատակով: Հանրությանը պետք է ներկայացվի նաև մթնոլորտային օդում կարգավորվող բոլոր աղտոտող նյութերի կոնցենտրացիաների մասին թարմ տեղեկատվություն,
- 22) օդի որակի մասին տվյալների վարումը և համեմատումը խթանելու նպատակով այդ տվյալները պետք է Հանձնաժողով ներկայացվեն ստանդարտացված եղանակով,
- 23) անհրաժեշտ է օդի որակի վերաբերյալ տվյալների տրամադրման, գնահատման և հաշվետվողականության ընթացակարգեր ընդունել՝ որպես տեղեկությունների տրամադրման հիմնական գործիք կիրառելով էլեկտրոնային միջոցներն ու համացանցը, և ապահովել, որ նման ընթացակարգերը համապատասխանեն Եվրոպական համայնքում տարածական կտրվածքով տեղեկատվության համար ենթակառուցվածքներ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2007 թվականի մարտի 14–ի 2007/2/ԵՀ հրահանգի (INSPIRE) պահանջներին¹⁷,
- 24) անհրաժեշտ է հնարավորություն ստեղծել՝ մթնոլորտային օդի որակը գնահատելու համար գիտական և տեխնիկական առաջընթացին համահունչ չափորոշիչներ և մեթոդներ ապահովելու համար. տեղեկատվության տրամադրման եղանակները

¹⁷ ՊՏ L 108, 25.04.2007թ., էջ 1:

նույնպես պետք է համատեղելի լինեն գիտական և տեխնիկական առաջընթացի հետ,

- 25) քանի որ սույն Հրահանգի նպատակները չեն կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից՝ օդն աղտոտող նյութերի անդրսահմանային բնույթից ելնելով, և ուստի կարող են ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է «Եվրոպական միության մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան միջոցներ սահմանել: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի գերազանցում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ շրջանակը,
- 26) անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն այն պատժամիջոցների վերաբերյալ, որոնք կիրառելի են սույն Կանոնակարգի դրույթների խախտումների նկատմամբ, և ապահովեն այդ պատժամիջոցների իրականացումը: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,
- 27) սույն Հրահանգով ուժը կորցրած ակտերի որոշ դրույթներ պետք է պահպանեն իրենց գործողությունը՝ ապահովելով օդում առկա ազոտի երկօքսիդի մակարդակների պահպանումը մինչև դրանց փոփոխությունը 2010 թվականի հունվարի 1-ին, օդի որակի մասով հաշվետվողականության շարունակումը՝ նախքան նոր կիրարկող միջոցների ընդունումը, և 2004/107/ԵՀ հրահանգով պահանջվող օդի որակի նախնական գնահատմանն առնչվող պարտավորությունների պահպանումը,
- 28) ազգային իրավունքում սույն Հրահանգը փոխատեղելու պարտավորությունը տարածվում է դրա այն դրույթների վրա, որոնք նախորդ հրահանգների համեմատությամբ էապես տարբեր նորմեր են սահմանում,
- 29) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան¹⁸ խրախուսվում է, որ անդամ պետությունները իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմեն սույն Հրահանգի ու փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակեն դրանք,

¹⁸ ՊՏ, С 321, 31.12.2003թ., էջ 1:

- 30) սույն Որոշմամբ հարգվում են Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայով ճանաչված հիմնարար իրավունքները և սկզբունքները: Մասնավորապես, սույն Հրահանգով նպատակ է դրվում խթանելու Միության քաղաքականության մեջ շրջակա միջավայրի բարձր մակարդակով պաշտպանության ու շրջակա միջավայրի բարելավման սկզբունքների ներդրումը՝ Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայի 37-րդ հոդվածով սահմանված կայուն զարգացման սկզբունքին համապատասխան,
- 31) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն, որը սահմանում է Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը¹⁹,
- 32) Հանձնաժողովը պետք է իրավասու լինի փոփոխելու I–VI, VIII–X և XV հավելվածները: Քանի որ այդ միջոցառումներն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5(ա) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,
- 33) փոխատեղման դրույթով պահանջվում է, որ անդամ պետություններն ապահովեն, որ վնասակար ներգործության միջինացված ցուցանիշը սահմանելուց որոշ ժամանակ առաջ իրականացվում են ֆոնային աղտոտման դիտանցի քաղաքային տարածքների անհրաժեշտ չափումներ՝ վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակի գնահատմանը և վնասակար ներգործության միջինացված ցուցանիշի հաշվարկմանն առնչվող պահանջների հետ համապատասխանությունը երաշխավորելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

¹⁹ ՊՏ, L 184, 17.07.1999թ., էջ 23:Թիվ 2006/512/ԵՀ որոշմամբ (ՊՏ L 200, 22.07.2006թ., էջ 11) փոփոխված որոշում:

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

Սույն Հրահանգով սահմանվում են միջոցներ՝ ուղղված.

1. մթնոլորտային օդի որակի մասով այնպիսի նպատակների որոշմանը և սահմանմանը, որոնք կնպաստեն մարդու առողջության և ամբողջությամբ վերցրած՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունից խուսափելուն, այն կանխելուն կամ նվազեցնելուն,
2. անդամ պետություններում մթնոլորտային օդի որակի գնահատմանը՝ ընդհանուր մեթոդների և չափորոշիչների հիման վրա,
3. մթնոլորտային օդի որակի մասին տեղեկությունների ձեռք բերմանը՝ մթնոլորտային օդի աղտոտման և անհարմարությունների դեմ պայքարին նպաստելու և ազգային ու Համայնքի կողմից ձեռնարկվող միջոցներից բխող երկարաժամկետ զարգացումները և բարելավումները դիտանցելու համար,
4. մթնոլորտային օդի որակի մասին նշված տեղեկությունները հանրության համար մատչելի դարձնելուն,
5. լավ օդի պահպանությանը և օդի որակն անբավարար լինելու դեպքում՝ դրա բարելավմանը,
6. օդի աղտոտումը նվազեցնելու գործում անդամ պետությունների միջև ավելի սերտ համագործակցության խթանմանը:

Հոդված 2

Հասկացությունները

Սույն Հրահանգի նպատակներով՝

1. «մթնոլորտային օդ» նշանակում է ներքնոլորտում առկա փակ տարածություններից դուրս գտնվող օդ՝ բացառությամբ հրահանգով սահմանված աշխատավայրերում առկա օդի, որտեղ կիրառվում են աշխատավայրում առողջության և անվտանգության վերաբերյալ դրույթները և որտեղ հասարակության անդամները սովորաբար մուտք չեն գործում.²⁰
2. «աղտոտող նյութ» նշանակում է մթնոլորտային օդում առկա ցանկացած նյութ, որը կարող է վնասակար ներգործություն ունենալ մարդու առողջության և (կամ), ամբողջությամբ վերցված, շրջակա միջավայրի վրա.
3. «մակարդակ» նշանակում է տվյալ ժամանակահատվածում մթնոլորտային օդում աղտոտող նյութի կոնցենտրացիան կամ մակերևույթի վրա դրանց կուտակումը.
4. «գնահատում» նշանակում է մակարդակները չափելու, հաշվարկելու, կանխատեսելու կամ գնահատելու համար կիրառվող ցանկացած մեթոդ.
5. «սահմանային թույլատրելի նորմա» նշանակում է մթնոլորտային օդում աղտոտող նյութերի գիտականորեն սահմանված մակարդակ, որը չգերազանցելու դեպքում հնարավոր է խուսափել, կանխել կամ նվազեցնել մարդու առողջության և (կամ) որպես ամբողջություն վերցված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և որին պետք է հասնել որոշակի ժամկետում ու պահպանել այն.
6. «կրիտիկական մակարդակ» նշանակում է մթնոլորտային օդում աղտոտող նյութերի գիտականորեն սահմանված մակարդակ, որը գերազանցելու դեպքում վնասակար ներգործության կենթարկվեն որոշ ռեցեպտորներ, ինչպես օրինակ՝ ծառերը, այլ բույսեր կամ շրջակա բնական միջավայրը, բայց ոչ՝ մարդիկ.
7. «թույլատրելի մարժա» նշանակում է սահմանային թույլատրելի նորմայի որոշակի տոկոսով գերազանցում, որը կատարվում է սույն Հրահանգով սահմանված պայմանների պահպանմամբ.

²⁰ «Աշխատավայրում անվտանգության և առողջության պահպանման նվազագույն պահանջները սահմանելու մասին» Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 30–ի 89/654/ԵՏՀ հրահանգ (ՊՏ, L 393, 30.12.1989թ., էջ 1): Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2007/30/ԵՀ հրահանգով (ՊՏ, L 165, 27.06.2007թ., էջ 21) փոփոխված Հրահանգ:

8. «օդի որակի պահպանության ծրագրեր» նշանակում է այնպիսի ծրագրեր, որոնք սահմանում են սահմանային կամ նպատակային արժեքներին հասնելու համար անհրաժեշտ միջոցները.
9. «նպատակային արժեք» նշանակում է մթնոլորտային օդում աղտոտող նյութերի ֆիքսված մակարդակ՝ մարդու առողջության և (կամ) որպես ամբողջություն վերցված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք կանխելու կամ նվազեցնելու նպատակով, և որին պետք է հասնել որոշակի ժամկետում.
10. «զգուշացման շեմ» նշանակում է աղտոտող նյութերի մակարդակ, որը գերազանցելու դեպքում բնակչության վրա կարճաժամկետ ազդեցությունը կարող է վտանգավոր լինել մարդու առողջության համար, և որի դեպքում անդամ պետությունները պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկեն.
11. «տեղեկացման շեմ» նշանակում է աղտոտող նյութերի մակարդակ, որը գերազանցելու դեպքում բնակչության հատկապես խոցելի մասի վրա կարճաժամկետ ազդեցությունը կարող է վտանգավոր լինել մարդու առողջության համար և որի դեպքում անհրաժեշտ է այս մասին անհապաղ և լիարժեք տեղեկություններ տրամադրել.
12. «գնահատման վերին շեմ» նշանակում է աղտոտող նյութերի կոնցենտրացիայի մակարդակ, որը չգերազանցելու դեպքում մթնոլորտային օդի որակը գնահատելու համար միաժամանակ կարող են կիրառվել ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներ, մոդելավորման մեթոդներ և (կամ) ինդիկատիվ չափումներ.
13. «գնահատման ստորին շեմ» նշանակում է աղտոտող նյութերի կոնցենտրացիայի մակարդակ, որը չգերազանցելու դեպքում մթնոլորտային օդի որակը գնահատելու համար կարող են օգտագործվել միայն մոդելավորման կամ օբյեկտիվ գնահատման մեթոդներ.
14. «երկարաժամկետ նպատակ» նշանակում է մթնոլորտում առկա աղտոտող նյութերի՝ երկարատև ժամկետում ձեռք բերվելիք մակարդակ, բացառությամբ, եթե այն չի կարող ձեռք բերվել համաչափ միջոցների կիրառմամբ, և որի նպատակը մարդու առողջության և շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է.

15. «աղտոտում բնական աղբյուրներից» նշանակում է ոչ մարդածին երևույթների արդյունքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտանետվող աղտոտող նյութեր, այդ թվում՝ այնպիսի բնական երևույթներ, ինչպիսիք են հրաբխային ժայթքումները, սեյսմիկ ակտիվությունը, երկրաջերմային երևույթները, անմշակ տարածքների հրդեհները, ուժեղ քամիները, ծովային ալեկոծությունները կամ բնական պինդ մարմիններն օդ բարձրանալը կամ չոր շրջաններից դրանց տեղաշարժը.
16. «գոտի» նշանակում է անդամ պետության այն մասը, որն անդամ պետությունը առանձնացրել է՝ օդի որակի գնահատման և կառավարման նպատակով.
17. «ազլոմերացիա» նշանակում է մեգապոլիս հանդիսացող գոտի, որի բնակչությունը գերազանցում է 250 000-ը կամ, եթե բնակչությունը 250 000 կամ պակաս է, գոտի, որի բնակչության խտությունը 1 քառակուսի կիլոմետրում սահմանված է անդամ պետության կողմից.
18. «ՊՄ₁₀» նշանակում է պինդ մասնիկներ, որոնք կարող են անցնել ՊՄ₁₀-ի նմուշառման և չափման ստուգանմուշային մեթոդում (EN 12341) սահմանված՝ ըստ չափերի դասակարգող անցքերով զննածողի միջով՝ 50 տոկոսի ճշտությամբ՝ հաշվի առնելով 10մկմ աէրոդինամիկական տրամագիծը.
19. «ՊՄ_{2.5}» նշանակում է պինդ մասնիկներ, որոնք կարող են անցնել ՊՄ_{2.5}-ի նմուշառման և չափման ստուգանմուշային մեթոդում (EN 14907) սահմանված՝ ըստ չափերի դասակարգող անցքերով զննածողի միջով՝ 50 տոկոսի ճշտությամբ՝ հաշվի առնելով 2.5մկմ աէրոդինամիկական տրամագիծը.
20. «վնասակար ներգործության միջինացված ցուցանիշ» նշանակում է աղտոտող նյութերի միջինացված մակարդակ, որը որոշվել է անդամ պետության տարածքում քաղաքային տարածքների ֆոնային աղտոտման դիտակայաններից կատարված չափումների հիման վրա և որը ցույց է տալիս բնակչության վրա վնասակար ներգործության չափերը: Այն օգտագործվում է վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակի և վնասակար ներգործության կոնցենտրացիայի մասով պարտավորությունը հաշվարկելու համար.
21. «վնասակար ներգործության կոնցենտրացիայի մասով պարտավորություն» նշանակում է վնասակար ներգործության միջինացված ցուցանիշի հիման վրա

սահմանված մակարդակ, որի նպատակը մարդու առողջության վրա վնասակար ներգործությունը նվազեցնելն է, որին պետք է հասնել որոշակի ժամկետում.

22. «վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակ» նշանակում է անդամ պետության՝ վնասակար ներգործության ենթարկվող բնակչության վրա այդ ներգործության միջին տոկոսային նվազումը, որը սահմանված է հաշվետու տարվա կտրվածքով՝ մարդու առողջության վրա վնասակար ներգործությունը, եթե հնարավոր է, որոշակի ժամկետում նվազեցնելու համար.
23. «ֆոնային աղտոտման դիտանցի քաղաքային տարածքներ» նշանակում է քաղաքային տարածքներ, որտեղ աղտոտող նյութերի մակարդակները ներկայացուցչական են ընդհանուր քաղաքային բնակչության վրա բացասական ներգործության առումով.
24. «ազոտի օքսիդներ» նշանակում է ազոտի մոնօքսիդի (ազոտի օքսիդի) և ազոտի երկօքսիդի բաղադրիչների ծավալային հարաբերակցությունը (պարունակությունը մեկ միլիարդ կշռային միավորի մեջ)՝ արտահայտված ազոտի երկօքսիդի զանգվածի խտության միավորներով (մկգ/մ³).
25. «ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներ» նշանակում է ամրակայված կայաններից շարունակական կամ կամընտիր նմուշառման միջոցով կատարվող չափումներ՝ տվյալների որակի պահանջներին համապատասխան մակարդակներ սահմանելու համար.
26. «ինդիկատիվ չափումներ» նշանակում է չափումներ, որոնք բավարարում են տվյալների որակի այնպիսի պահանջները, որոնք ավելի մեղմ են, քան ամրակայված դիտակայաններում կատարվող չափումներին ներկայացվող պահանջները.
27. «ցնդող օրգանական միացություններ» (SOU) նշանակում է մարդկային գործունեության և բնական արտանետման աղբյուրներից ծագող օրգանական միացություններ, բացառությամբ մեթանի, որոնք արևի լույսի ներքո կարող են ազոտի օքսիդների հետ փոխազդեցության մեջ մտնելով լուսաօքսիդիչներ արտադրել.
28. «օզոնային շերտը քայքայող նյութեր» նշանակում է նյութեր, որոնք նպաստում են գետնամերձ օզոնի ծավալների ավելացմանը և որոնց մի մասը նշված է X հավելվածում:

Հոդված 3

Պարտավորությունները

Անդամ պետությունները համապատասխան մակարդակներում նշանակում են իրավասու իշխանություններ և մարմիններ, որոնք պատասխանատու են հետևյալի համար՝

- ա) մթնոլորտային օդի որակի գնահատում.
- բ) չափման համակարգերի հաստատում (մեթոդներ, սարքավորումներ, ցանցեր և լաբորատորիաներ).
- գ) չափումների ճշտության ապահովում.
- դ) գնահատման մեթոդների վերլուծություն.
- ե) Հանձնաժողովի կողմից Համայնքի տարածքում որակի ապահովման ծրագրերի կազմակերպման դեպքում իրենց տարածքներում համակարգում
- զ) այլ անդամ պետությունների և Հանձնաժողովի հետ համագործակցություն:

Իրավասու իշխանությունները և մարմինները հարկ եղաձ դեպքում պետք է բավարարեն I հավելվածի Գ մասում սահմանված պահանջները:

Հոդված 4

Գոտիների և ագլոմերացիաների ձևավորումը

Անդամ պետություններն իրենց տարածքներում ձևավորում են գոտիներ և ագլոմերացիաներ: Օդի որակի գնահատումն ու կառավարումը պետք է իրականացվի բոլոր գոտիներում և ագլոմերացիաներում:

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՄԱՍ 1

Մթնոլորտային օդի գնահատումը ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների, պինդ մարմինների, կապարի, բենզոլի և շմոլ գազի մակարդակները որոշելու առումով

Հոդված 5

Գնահատման համակարգը

1. II հավելվածի Ա մասում նշված գնահատման վերին և ստորին շեմերը կիրառվում են ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների, պինդ մարմինների (ՊՄ₁₀ և ՊՄ_{2,5}), կապարի, բենզոլի և շմոլ գազի նկատմամբ:

Յուրաքանչյուր գոտի և ագլոմերացիա դասակարգվում է ըստ այդ գնահատման շեմերի:

2. Առաջին պարբերության մեջ նշված դասակարգումը վերանայվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ II հավելվածի Ա մասով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Ընդ որում, դասակարգումները պետք է վերանայվեն առավել հաճախ, եթե մթնոլորտային օդում ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի կամ, համապատասխան դեպքերում, ազոտի օքսիդների, պինդ մարմինների (ՊՄ₁₀ և ՊՄ_{2,5}), կապարի, բենզոլի կամ շմոլ գազի մակարդակների էական փոփոխություններ են տեղի ունենում:

Հոդված 6

Գնահատման չափորոշիչները

1. Անդամ պետությունները բոլոր գոտիներում և ագլոմերացիաներում գնահատում են մթնոլորտային օդի որակը 5-րդ հոդվածում նշված աղտոտող նյութերի առկայության

մասով՝ սույն հոդվածի 2–րդ, 3–րդ և 4–րդ պարբերություններում ու III հավելվածով սահմանված չափորոշիչներին համապատասխան:

2. Բոլոր գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ 1–ին պարբերության մեջ նշված աղտոտող նյութերի մակարդակները գերազանցում են դրանց համար սահմանված գնահատման վերին շեմը, մթնոլորտային օդի որակի գնահատման համար պետք է ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներ կիրառվեն : Ամրակայված դիտակայաններից կատարվող այդ չափումների հետ համատեղ կարող են կիրառվել մոդելավորման տեխնիկաներ և (կամ) ինդիկատիվ չափումներ՝ մթնոլորտային օդի որակի պատկերը տվյալ տարածքում պատշաճ կերպով ներկայացնելու նպատակով:

3. Բոլոր գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ 1–ին պարբերության մեջ նշված աղտոտող նյութերի մակարդակները ցածր են դրանց համար սահմանված գնահատման վերին շեմից, մթնոլորտային օդի որակը գնահատելու համար միաժամանակ կարող են կիրառվել ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներ, մոդելավորման մեթոդներ և (կամ) ինդիկատիվ չափումներ:

4. Բոլոր գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ 1–ին պարբերության մեջ նշված աղտոտող նյութերի մակարդակները ցածր են դրանց համար սահմանված գնահատման ստորին շեմից, մթնոլորտային օդի որակը գնահատելու համար կարող են օգտագործվել միայն մոդելավորման կամ օբյեկտիվ գնահատման մեթոդները կամ երկուսն էլ:

5. Օդի աղտոտման խոշոր աղբյուրներից հեռու գտնվող ֆոնային աղտոտման դիտանցի գյուղական տարածքներում 2–րդ, 3–րդ և 4–րդ պարբերություններում նշված գնահատումներից բացի պետք է կատարվեն չափումներ՝ առնվազն տարեկան միջին կտրվածքով մանր պինդ մասնիկների ($\text{PM}_{2.5}$) ընդհանուր կոնցենտրացիաների և քիմիական գոյացությունների կոնցենտրացիաների մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով, որոնք պետք է կատարվեն՝ կիրառելով հետևյալ չափորոշիչները՝

ա) մեկ նմուշառման դիտակետ պետք է տեղադրված լինի յուրաքանչյուր 100 000 քառակուսի կիլոմետրի վրա.

բ) յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ձևավորի առնվազն մեկ դիտակայան կամ, հարակից անդամ պետությունների հետ համաձայնությամբ, կարող է

ձևավորել մեկ կամ մի քանի ընդհանուր դիտակայաններ, որոնք նախատեսված են հարակից գոտիների դիտարկման համար՝ անհրաժեշտ տարածքում աղտոտման պատկերը պարզելու նպատակով.

գ) դիտանցումը հարկ եղած դեպքում պետք է իրականացվի «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագրի» (EMEP) դիտանցման ռազմավարությանը և դիտարկումների ծրագրին համապատասխան

դ) I հավելվածի Ա և Գ մասերը կիրառվում են պինդ մարմինների զանգվածի կոնցենտրացիաների դիտարկումներից ստացված տվյալների որակի պահանջների նկատմամբ, և IV հավելվածը կիրառվում է ամբողջությամբ:

Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են մանր պինդ մարմինների (ՊՄ_{2.5}) քիմիական բաղադրությունը չափելու համար կիրառվող չափման մեթոդների մասին:

Հոդված 7

Նմուշառման դիտակետեր

1. Մթնոլորտային օդում ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների, պինդ մարմինների (ՊՄ₁₀, ՊՄ_{2.5}), կապարի, բենզոլի ու շմոլ գազի մակարդակների չափումների համար նմուշառման դիտակետերի տեղակայումը որոշվում է VI հավելվածում ներկայացված չափորոշիչների հիման վրա:

2. Այն բոլոր գոտիներում կամ ագլոմերացիաներում, որտեղ ամրակայված դիտակայաններից կատարվող չափումները օդի որակի գնահատման համար տվյալների ձեռքբերման միակ աղբյուրն են, յուրաքանչյուր աղտոտող նյութի համար նմուշառման դիտակետերի թիվը չպետք է պակաս լինի V հավելվածի Ա մասում նշված նմուշառման դիտակետերի թվից:

3. Այն գոտիներում և ագլոմերացիաներում, որոնց տարածքում ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներից բացի իրականացվում է նաև մոդելավորում և (կամ) ինդիկատիվ չափումներ, V հավելվածի Ա մասում նշված նմուշառման

դիտակետերի ընդհանուր թիվը կարող է նվազեցվել 50%-ով՝ պայմանով, որ բավարարվեն հետևյալ պայմանները՝

- ա) օժանդակ մեթոդները բավարար տվյալներ են տրամադրում օդի որակը սահմանային թույլատրելի նորմաների կամ զգուշացման շեմերի մասով գնահատելու համար, ինչպես նաև պատշաճ տեղեկություններ տրամադրում հանրության համար,
- բ) ստեղծվելիք նմուշառման դիտակետերի թիվը և այլ միջոցների տարածքային ընդգրկումը բավարար են՝ համապատասխան աղտոտող նյութերի կոնցենտրացիան որոշելու համար՝ I հավելվածի Ա մասում նշված տվյալների որակի պահանջներին համապատասխան և հնարավորություն են տալիս, որ գնահատման արդյունքները բավարարեն I հավելվածի Բ մասում սահմանված չափորոշիչները:

Մոդելավորման և (կամ) ինդիկատիվ չափումների արդյունքները հաշվի են առնվում սահմանային թույլատրելի նորմաների մասով օդի որակը գնահատելու համար:

4. Անդամ պետությունների կողմից նմուշառման դիտակետերի ընտրության չափորոշիչների կիրառումը Հանձնաժողովի կողմից դիտանցվում է այնպես, որ խթանվի այդ չափորոշիչների ներդաշնակեցված կիրառումը Եվրոպական միության ամբողջ տարածքում:

Հոդված 8

Չափումների ստանդարտ մեթոդներ

1. Անդամ պետությունները կիրառում են VI հավելվածի Ա և Գ մասերում նշված չափումների ստանդարտ մեթոդներն ու չափորոշիչները:
2. Չափումների այլ մեթոդներ կարող են կիրառվել VI հավելվածի Բ մասում սահմանված պահանջների պահպանմամբ:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը՝ օզոնի մակարդակը որոշելու համար

Հոդված 9

Գնահատման չափորոշիչները

1. Եթե որևէ գոտում կամ ագլոմերացիայում չափումների իրականացման արդյունքում նախորդող հինգ տարիների ընթացքում օզոնի կոնցենտրացիան գերազանցել է VII հավելվածի Գ մասում նշված երկարաժամկետ նպատակները, ապա ամրակայված դիտակայանից չափումներ են կատարվում :

2. Եթե հինգ տարուց պակաս ժամանակահատվածի համար տվյալներ են կուտակված, անդամ պետությունները կարող են, նշված հինգ տարվա կտրվածքում 1–ին պարբերության մեջ նշված երկարաժամկետ նպատակների գերազանցումը որոշելու համար առավելագույն կոնցենտրացիաներ գրանցած վայրերում և ժամանակահատվածներում կատարված կարճաժամկետ չափումներից ստացված տվյալները համատեղել արտանետումների կադաստրի և մոդելավորման մեթոդներով ստացված արդյունքների հետ:

Հոդված 10

Նմուշառման դիտակետեր

1. Օզոնի կոնցենտրացիաների չափման համար նմուշառման դիտակետերի տեղակայումը որոշվում է VIII հավելվածով սահմանված չափորոշիչների հիման վրա:

2. Այն բոլոր գոտիներում կամ ագլոմերացիաներում, որտեղ ամրակայված նմուշառման դիտակայաններից կատարվող չափումներն օդի որակի գնահատման համար տվյալների ձեռքբերման միակ աղբյուրն են, այդ նմուշառման դիտակետերի թիվը չպետք է պակաս լինի IX հավելվածի Ա մասում նշված նմուշառման դիտակետերի թվից:

3. Այն գոտիներում և ագլոմերացիաներում, որոնց տարածքում ամրակայված նմուշառման դիտակայաններից կատարվող չափումներից բացի իրականացվում է նաև մոդելավորում և (կամ) ինդիկատիվ չափումներ, IX հավելվածի Ա մասում նշված

նմուշառման դիտակետերի ընդհանուր թիվը կարող է նվազեցվել՝ պայմանով, որ պահպանված են հետևյալ պայմանները՝

- ա) օժանդակ մեթոդները բավարար տվյալներ են տրամադրում օդի որակը սահմանային թույլատրելի նորմաների, երկարաժամկետ նպատակների, տեղեկատվության և զգուշացման շեմերի մասով գնահատելու համար,
- բ) ստեղծվելիք նմուշառման դիտակետերի թիվը և այլ միջոցների տարածքային ընդգրկումը բավարար են՝ օզոնի կոնցենտրացիան որոշելու համար՝ I հավելվածի Ա մասում նշված տվյալների որակի պահանջներին համապատասխան և հնարավորություն են տալիս, որ գնահատման արդյունքները բավարարեն I հավելվածի Բ մասում սահմանված չափորոշիչները,
- գ) յուրաքանչյուր գոտում կամ ագլոմերացիայում երկու միլիոն բնակչի հաշվով կամ յուրաքանչյուր 50 000 քառակուսի կիլոմետրի վրա առկա է առնվազն մեկ նմուշառման դիտակետ, կախված այն բանից, թե որ դեպքում է ապահովվում նմուշառման դիտակետերի առավելագույն թիվը, սակայն յուրաքանչյուր գոտում կամ ագլոմերացիայում պետք է լինի առնվազն մեկ նմուշառման դիտակետ,
- դ) ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան չափվում է բոլոր մնացած նմուշառման դիտակետերում՝ բացառությամբ VIII հավելվածի Ա մասում նշված ֆոնային աղտոտման դիտանցի գյուղական տարածքներում:

Մոդելավորման և (կամ) ինդիկատիվ չափումների արդյունքները հաշվի են առնվում նպատակային արժեքի մասով օդի որակը գնահատելու համար:

4. Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան չափվում է IX հավելվածի Ա մասով նախատեսված օզոնի նմուշառման դիտակետերի առնվազն 50 %-ում: Այդ չափումները պետք է լինեն պարբերական՝ բացառությամբ VIII հավելվածի Ա մասում նշված այն ֆոնային աղտոտման դիտանցի գյուղական տարածքների, որտեղ կարող են կիրառվել չափման այլ մեթոդներ:

5. Այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ նախորդ հինգ տարվա չափումների ընթացքում կոնցենտրացիաները պակաս են երկարաժամկետ նպատակային մակարդակից, ամրակայված նմուշառման դիտակետերի թիվը որոշվում է IX հավելվածի Բ մասին համապատասխան:

6. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ իր տարածքում տեղակայված է և գործում է առնվազն մեկ նմուշառման դիտակետ՝ X հավելվածով նախատեսված օզոնային շերտը քայքայող նյութերի կոնցենտրացիաների մասին տվյալներ տրամադրելու նպատակով: Յուրաքանչյուր անդամ պետություն ընտրում է օզոնային շերտը քայքայող նյութերի չափման համար նախատեսված նմուշառման դիտակետերի թիվն ու տեղակայման վայրը՝ հաշվի առնելով X հավելվածով սահմանված նպատակներն ու մեթոդները:

Հոդված 11

Չափումների ստանդարտ մեթոդներ

1. Անդամ պետությունները կիրառում են VI հավելվածի Ա մասի 8-րդ կետով սահմանված՝ օզոնի կոնցենտրացիայի չափման ստանդարտ մեթոդները: Չափումների այլ մեթոդներ կարող են կիրառվել VI հավելվածի Բ մասում սահմանված պահանջների պահպանմամբ:
2. Յուրաքանչյուր անդամ պետություն Հանձնաժողովին տեղեկացնում է X հավելվածում նշված ՑՕՄ-երի նմուշառման և չափման՝ իր կողմից կիրառվող մեթոդների մասին:

ԳԼՈՒԽ III

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 12

Սահմանային թույլատրելի նորմաներից ցածր կոնցենտրացիաների դեպքում ներկայացվող պահանջները

Այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ ծծմբային անհիդրիդի, ազոտի օքսիդի, ՊՄ₁₀-ի, ՊՄ_{2,5}-ի, կապարի, բենզոլի և շմոլ գազի կոնցենտրացիաները մթնոլորտային օդում ցածր են XI և XIV հավելվածներում նշված սահմանային թույլատրելի նորմաներից, անդամ պետությունները պետք է այդ կոնցենտրացիաների մակարդակները պահպանեն սահմանային թույլատրելի նորմայից ցածր և փորձեն պահպանել մթնոլորտային օդի լավագույն որակն այնպես, որ համատեղելի լինի կայուն զարգացման սկզբունքի հետ:

Հոդված 13

Մարդու առողջության պաշտպանության սահմանային թույլատրելի նորմաներն ու զգուշացման շեմերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց գոտիներում և ագլոմերացիաներում ծծմբային անհիդրիդի, ՊՄ₁₀-ի, կապարի և շմոլ գազի կոնցենտրացիաները մթնոլորտային օդում չգերազանցեն XI հավելվածով սահմանված սահմանային թույլատրելի նորմաները:

Ազոտի երկօքսիդի և բենզոլի մասով XI հավելվածում նշված սահմանային թույլատրելի նորմաներն այդ հավելվածում նշված ժամկետներից հետո չպետք է գերազանցվեն:

Այդ պահանջների ապահովումը գնահատվում է III հավելվածին համապատասխան:

XI հավելվածով սահմանված թույլատրելի մարժաները կիրառվում են 22(3) և 23(1) հոդվածներին համապատասխան:

2. Մթնոլորտային օդում ծծմբային անհիդրիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների զգուշացման շեմերը պետք է համապատասխանեն XII հավելվածի Ա մասով սահմանված շեմին:

Հոդված 14

Կրիտիկական մակարդակները

1. Անդամ պետություններն ապահովում են XIII հավելվածում նշված կրիտիկական մակարդակների հետ համապատասխանությունը՝ համաձայն III հավելվածի Ա մասով նախատեսված գնահատման:

2. Եթե ամրակայված դիտակայանից կատարվող չափումները օդի որակի գնահատման համար տվյալների ձեռքբերման միակ աղբյուրն են, նմուշառման դիտակետերի թիվը պետք է առնվազն այնքան լինի, որքան նշված է V հավելվածի Գ մասում: Եթե տվյալների ստացմանը օժանդակում են ինդիկատիվ չափումների կամ մոդելավորման միջոցով, ապա նմուշառման դիտակետերի թիվը կարող է նվազեցվել 50%-ով՝ պայմանով, որ տվյալ աղտոտող նյութի գնահատված կոնցենտրացիաները կարող են որոշվել հավելվածի Ա մասում նշված տվյալների որակի պահանջներին համապատասխան:

Հոդված 15

Մարդու առողջության պաշտպանության համար ՊՄ_{2.5}-ի վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք չեն ներառում անհամաչափ ծախսեր՝ ՊՄ_{2.5}-ի վնասակար ներգործությունը նվազեցնելու համար այնպես, որ իրագործվի XIV հավելվածի Բ մասով սահմանված վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակը՝ նախքան այդ մասում նշված տարին:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ XIV հավելվածի Ա մասին համապատասխան սահմանված՝ 2015 թվականի վնասակար ներգործության միջինացված ցուցանիշը չգերազանցի նույն հավելվածի Գ մասով սահմանված՝ վնասակար ներգործության կոնցենտրացիայի մասով պարտավորությամբ նախատեսված սահմանը:
3. ՊՄ_{2.5}-ի վնասակար ներգործության միջինացված ցուցանիշը գնահատվում է XIV հավելվածի Ա մասին համապատասխան:
4. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է, III հավելվածին համապատասխան, ապահովի, որ այն նմուշառման դիտակետերի բաշխվածությունն ու թիվը, որոնց հիման վրա որոշվում է ՊՄ_{2.5}-ի վնասակար ներգործության միջինացված ցուցանիշը, ճշտորեն արտացոլի ընդհանուր բնակչության վրա ներգործությունը: Նմուշառման դիտակետերի թիվը չպետք է պակաս լինի V հավելվածի Բ մասի կիրառմամբ սահմանված թվից:

Հոդված 16

Մարդու առողջության պաշտպանության համար ՊՄ_{2.5}-ի նպատակային արժեքը և սահմանային թույլատրելի նորման

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք չեն ներառում անհամաչափ ծախսեր, ապահովելու համար, որ մթնոլորտային օդում ՊՄ_{2.5}-ի կոնցենտրացիաները չգերազանցեն XIV հավելվածի Դ մասով սահմանված նպատակային արժեքը՝ այդ մասում նշված ամսաթվից սկսած:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց գոտիներում և ազլումերացիաներում ՊՄ_{2.5}-ի կոնցենտրացիաները մթնոլորտային օդում չգերազանցեն XIV հավելվածի Ե մասով սահմանված սահմանային թույլատրելի նորման՝ այդ մասում նշված ամսաթվից սկսած: Այդ պահանջի ապահովումը գնահատվում է III հավելվածին համապատասխան:

3. XIV հավելվածի Ե մասով սահմանված թույլատրելի մարժան կիրառվում է 23(1) հոդվածին համապատասխան:

Հոդված 17

Նպատակային արժեքները և երկարաժամկետ նպատակային սահմանները գերազանցող օզոնի կոնցենտրացիաներով գոտիներին և ազլումերացիաներին ներկայացվող պահանջները

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք չեն ներառում անհամաչափ ծախսեր՝ ապահովելու նպատակային արժեքների ու երկարաժամկետ նպատակների ձեռքբերումը:

2. Այն գոտիներում և ազլումերացիաներում, որտեղ նպատակային արժեքը գերազանցված է, անդամ պետություններն ապահովում են, որ իրականացվի 2001/81/ԵՀ Հրահանգի 6-րդ հոդվածին համապատասխան մշակված ծրագիրը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, օդի որակի պահպանության ծրագիրը՝ սույն Հրահանգի VII հավելվածի Բ մասում նշված ամսաթվից սկսած նպատակային արժեքն ապահովելու համար, բացառությամբ, եթե այն անհամաչափ ծախսեր չներառող միջոցներով հնարավոր չէ ապահովել:

3. Այն գոտիներում և ազլումերացիաներում, որտեղ մթնոլորտային օդում օզոնի կոնցենտրացիան գերազանցում է երկարաժամկետ նպատակը, սակայն ցածր կամ հավասար է նպատակային արժեքին, անդամ պետությունները մշակում և իրականացնում են ֆինանսապես արդյունավետ միջոցներ՝ երկարաժամկետ նպատակին հասնելու նպատակով: Այդ միջոցները պետք է առնվազն համապատասխանեն օդի որակի պահպանության ծրագրերին և 2-րդ պարբերության մեջ նշված ծրագրին:

Հոդված 18

Երկարաժամկետ նպատակները բավարարող գոտիներին և ագլոմերացիաներին ներկայացվող պահանջները

Այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ օզոնի կոնցենտրացիաները բավարարում են երկարաժամկետ նպատակները, անդամ պետությունները պետք է, այնքանով, որքանով թույլ են տալիս այնպիսի գործոններ, ինչպիսիք են օզոնով անդրսահմանային աղտոտվածության բնույթը և օդերևութաբանական պայմանները, այդ մակարդակները պահպանեն երկարաժամկետ նպատակներից ցածր, ինչպես նաև համաչափ միջոցներով պահպանեն մթնոլորտային օդի լավագույն որակն այնպես, որ այն համատեղելի լինի կայուն զարգացման սկզբունքի և բնապահպանության ու մարդու առողջության պաշտպանության բարձր մակարդակի հետ:

Հոդված 19

Տեղեկացման կամ զգուշացման շեմերի գերազանցման դեպքում պահանջվող միջոցները

Եթե XII հավելվածում նշված տեղեկացման շեմը կամ դրանով սահմանված զգուշացման շեմերից որևէ մեկը գերազանցվել է, անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր՝ հանրությանը ռադիոյի, հեռուստատեսության, մամուլի կամ համացանցի միջոցով տեղեկացնելու համար:

Անդամ պետությունները ժամանակավոր հիմունքներով Հանձնաժողովին տեղեկություններ են տրամադրում գրանցված մակարդակների և այն ժամկետների մասին, որոնց ընթացքում գերազանցվել են տեղեկացման կամ զգուշացման շեմերը:

Հոդված 20

Աղտոտում բնական աղբյուրներից

1. Տվյալ տարվա համար անդամ պետությունները Հանձնաժողովին են փոխանցում այն գոտիների և ագլոմերացիաների ցանկը, որտեղ որոշակի աղտոտող նյութի սահմանային

թույլատրելի նորմայի գերազանցումները տեղի են ունեցել բնական աղբյուրների հաշվին: Անդամ պետությունները տրամադրում են կոնցենտրացիաների և աղբյուրների մասին տեղեկություններ ու ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ գերազանցումները տեղի են ունեցել բնական աղբյուրների հաշվին:

2. Եթե 1-ին պարբերությանը համապատասխան, Հանձնաժողովը տեղեկացվել է, որ գերազանցումները տեղի են ունեցել բնական աղբյուրների հաշվին, ապա այդ գերազանցումը սույն Հրահանգի նպատակներով գերազանցում չի համարվում:

3. Հանձնաժողովը մինչև 2010 թվականի հունիսի 11-ը հրապարակում է բնական աղբյուրների հաշվին տեղ գտած գերազանցումները ներկայացնելու և ընդհանուր գերազանցումների ծավալներից դրանք հանելու վերաբերյալ ուղեցույցներ:

Հոդված 21

Ձմռանը ճանապարհներին ավազ կամ աղ լցնելու հետևանքով աղտոտման մակարդակի գերազանցումները

1. Անդամ պետությունները կարող են սահմանել այն գոտիներն ու ագլոմերացիաները, որտեղ մթնոլորտային օդում ՊՄ₁₀-ի սահմանային թույլատրելի նորմաները գերազանցվում են՝ ձմռանը ճանապարհներին ավազ կամ աղ լցնելու պատճառով պինդ մարմինների օդ բարձրանալու հետևանքով:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում նման գոտիների կամ ագլոմերացիաների ցանկը՝ դրանցում առկա ՊՄ₁₀-ի կոնցենտրացիաների և աղբյուրների մասին տեղեկությունների հետ միասին:

3. Հանձնաժողովին 27-րդ հոդվածին համապատասխան տեղեկացնելով՝ անդամ պետությունները պետք է տրամադրեն անհրաժեշտ ապացույցներ՝ ցույց տալու համար, որ գերազանցումները պինդ մարմիններն օդ բարձրանալու հետևանք են, և որ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ այդ կոնցենտրացիաները նվազեցնելու նպատակով:

4. Չհակասելով 20-րդ հոդվածին՝ սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված գոտիների և ագլոմերացիաների դեպքում անդամ պետությունները պարտավոր են 23-րդ

հողվածով նախատեսված օդի որակի պահպանության ծրագիր մշակել միայն այն դեպքում, եթե գերազանցումները ՊՄ₁₀-ով աղտոտման այլ աղբյուրների, բայց ոչ ձմռանը ճանապարհներին ավազ կամ աղ լցնելու հետևանքով:

5. Հանձնաժողովը մինչև 2010 թվականի հունիսի 11-ը պետք է ուղեցույցներ հրապարակի՝ ձմռանը ճանապարհներին ավազ կամ աղ լցնելու պատճառով պինդ մարմինների օդ քարձրանալու հետևանքով արտանետումների ծավալները որոշելու համար:

Հոդված 22

Նպատակային կոնցենտրացիաների ձեռքբերման վերջնաժամկետի հետաձգումը և որոշակի սահմանային թույլատրելի նորմաներ կիրառելու պարտավորությունից ազատելը

1. Եթե տվյալ գոտում կամ ագլոմերացիայում ազոտի երկօքսիդի կամ բենզոլի սահմանային թույլատրելի նորմաները չեն ապահովվում XI հավելվածում նշված վերջնաժամկետներին, անդամ պետությունը տվյալ գոտու կամ ագլոմերացիայի համար կարող է հետաձգել այդ վերջնաժամկետներն առավելագույնը հինգ տարով՝ պայմանով, որ այդ գոտու կամ ագլոմերացիայի համար մշակվում է 23-րդ հոդվածին համապատասխան օդի որակի պահպանության ծրագիր. այդ օդի որակի պահպանության ծրագրին կարող է կցվել համապատասխան աղտոտող նյութերին առնչվող՝ XV հավելվածի Բ մասում նշված տեղեկությունները և ներկայացվել, թե մինչև նոր վերջնաժամկետը ինչպես է ապահովվելու սահմանային թույլատրելի նորմայի հետ համապատասխանությունը:

2. Եթե տվյալ գոտու կամ ագլոմերացիայի օդում փոշու քանակության, և դրանցում վատ կլիմայական պայմանների կամ անդրսահմանային աղտոտման հետևանքով չեն ապահովվում XI հավելվածում նշված ՊՄ₁₀-ի սահմանային թույլատրելի նորմաները, անդամ պետությունն ազատվում է այդ սահմանային թույլատրելի նորմաները մինչև 2011 թվականի հունիսի 11-ը կիրառելու պարտավորությունից՝ պայմանով, որ բավարարվում են 1-ին պարբերությամբ սահմանված պայմանները և անդամ պետությունը ցույց է տալիս, որ ազգային, շրջանային և տեղական մակարդակով ձեռնարկել է բոլոր

անհրաժեշտ միջոցները՝ վերջնաժամկետներին համապատասխան սահմանային թույլատրելի նորմա ապահովելու նպատակով:

3. Եթե անդամ պետությունը կիրառում է 1-ին կամ 2-րդ պարբերությունները, նա ապահովում է, որ յուրաքանչյուր աղտոտող նյութի մասով սահմանային թույլատրելի նորման չի գերազանցվում XI հավելվածում նշված՝ յուրաքանչյուր աղտոտող նյութի մասով առավելագույն թույլատրելի մարժայից ավելի:

4. Անդամ պետությունները Հանձնաժողովին ծանուցում են իրենց կարծիքով 1-ին կամ 2-րդ պարբերությունների կիրառելիության մասին և ներկայացնում 1-ին պարբերությունում նշված՝ օդի որակի պահպանության ծրագիրը՝ բոլոր համապատասխան տեղեկությունների հետ միասին, որոնք Հանձնաժողովին անհրաժեշտ են՝ համապատասխան պայմանների ապահովումը գնահատելու համար: Գնահատման ժամանակ Հանձնաժողովը պետք է հաշվի առնի նաև մթնոլորտային օդի որակի վրա անդամ պետությունների կողմից ձեռնարկված միջոցների՝ ներկա և ապագա ազդեցությունը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից առաջարկված՝ համայնքային մակարդակով ներկայումս և ապագայում իրականացվող միջոցների ազդեցությունը մթնոլորտային օդի որակի վրա:

Եթե Հանձնաժողովը նշված ծանուցումից հետո իննամսյա ժամկետում առարկություններ չի ներկայացնում, 1-ին կամ 2-րդ պարբերությունների կիրառման համար անհրաժեշտ պայմանները համարվում են ապահովված:

Եթե առարկություններ են ներկայացվում, Հանձնաժողովը կարող է պահանջել, որ անդամ պետությունները փոփոխեն օդի որակի պահպանության ծրագրերը կամ մշակեն նոր ծրագրեր:

Հոդված 23

Օդի որակի պահպանության ծրագրեր

1. Եթե տվյալ գոտում կամ ագլոմերացիայում մթնոլորտային օդում աղտոտող նյութերի կոնցենտրացիաները գերազանցում են որևէ սահմանային թույլատրելի նորմա կամ նպատակային արժեք, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում գերազանցում են նաև թույլատրելի մարժայի սահմանները, անդամ պետություններն ապահովում են, որ այդ գոտիների կամ ագլոմերացիաների համար սահմանվեն օդի որակի պահպանության ծրագրեր՝ XI և XIV հավելվածներում նշված սահմանային և նպատակային արժեքների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Եթե գերազանցվել են այն սահմանային թույլատրելի նորմաները, որոնց ապահովման վերջնաժամկետը լրացել է, օդի որակի պահպանության ծրագրերը պետք է նախատեսեն այնպիսի միջոցներ, որոնք հնարավորինս կկրճատեն այդ գերազանցման ժամկետը: Օդի որակի պահպանության ծրագրերը կարող են ներառել նաև բնակչության խոցելի խմբերի, այդ թվում՝ երեխաների պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցներ:

Օդի որակի պահպանության ծրագրերը պետք է առնվազն ներառեն XV հավելվածի Ա մասում նշված տեղեկությունները, ինչպես նաև կարող են ներառել 24-րդ հոդվածով նախատեսված միջոցները: Այդ ծրագրերի մասին անհապաղ ծանուցում են Հանձնաժողովին, սակայն ոչ ուշ, քան գերազանցման առաջին դեպքի արձանագրման տարվանից հետո երկու տարվա ընթացքում:

Եթե օդի որակի պահպանության ծրագրերը պետք է մշակվեն կամ իրականացվեն մի քանի աղտոտող նյութերի մասով, անդամ պետությունները, հարկ եղած դեպքում, մշակում և իրականացնում են բոլոր համապատասխան աղտոտող նյութերին վերաբերող օդի որակի պահպանության միասնական ծրագրեր:

2. Անդամ պետությունները, որքանով հնարավոր է, ապահովում են այդ ծրագրերի՝ 2001/80/ԵՀ, 2001/81/ԵՀ կամ 2002/49/ԵՀ հրահանգներով պահանջվող այլ ծրագրերի

հետ համապատասխանությունը՝ անհրաժեշտ բնապահպանական նպատակներին հասնելու համար:

Հոդված 24

Կարճաժամկետ գործողությունների ծրագրեր

1. Եթե տվյալ գոտում կամ ագլոմերացիայում առկա է վտանգ, որ աղտոտող նյութերի կոնցենտրացիաները կգերազանցեն XII հավելվածում նշված մեկ կամ ավելի զգուշացման սահմանները, անդամ պետությունները պետք է կարճատև ժամկետում մշակեն ձեռնարկվելիք միջոցներ սահմանող գործողությունների ծրագրեր՝ նշված գերազանցումների վտանգը կամ տևողությունը կրճատելու նպատակով: Եթե վտանգը վերաբերում է VII, XI և XIV հավելվածներում նշված մեկ կամ ավելի սահմանային թույլատրելի նորմաներին կամ նպատակային արժեքներին, անդամ պետությունները կարող են անհրաժեշտության դեպքում մշակել նման կարճաժամկետ գործողությունների ծրագրեր:

Այդուհանդերձ, եթե առկա է վտանգ, որ Բ մասում նշված օզոնի կոնցենտրացիայի զգուշացման շեմը կարող է գերազանցվել, անդամ պետությունները մշակում են XII հավելվածի Բ մասում նշված կարճաժամկետ գործողությունների ծրագրերը միայն այն դեպքում, երբ, իրենց կարծիքով և հաշվի առնելով պետության աշխարհագրական, օդերևութաբանական և տնտեսական պայմանները, իրական հնարավորություն կա նվազեցնելու գերազանցման վտանգը, տևողությունը կամ վտանգավորությունը: Նման կարճաժամկետ գործողությունների ծրագիր մշակելիս անդամ պետությունները հաշվի են առնում 2004/279/ԵՀ հրահանգի պահանջները:

2. Առաջին պարբերությունում նշված կարճաժամկետ գործողությունների ծրագրերը, կախված առանձին դեպքից, կարող են նախատեսել գերազանցվող համապատասխան սահմանային թույլատրելի նորմայի կամ նպատակային արժեքի կամ զգուշացման շեմի գերազանցման վտանգին նպաստող գործողությունների վերահսկողության և, անհրաժեշտության դեպքում, կասեցման արդյունավետ միջոցներ: Այդ գործողությունների ծրագրերով կարող է ավտոմեքենաների երթևեկության, շինարարական աշխատանքների, կառանված նավերի, ինչպես նաև արդյունաբերական գործարանների կամ ապրանքների և բնակարանային ջեռուցմանն առնչվող միջոցներ

նախատեսվեն: Այդ ծրագրերի շրջանակներում կարող են նախատեսվել նաև բնակչության խոցելի խմբերի, այդ թվում՝ երեխաների պաշտպանությանն ուղղված հատուկ գործողություններ:

3. Երբ անդամ պետությունները կազմում են կարճաժամկետ գործողությունների ծրագիր, ապա հանրությանն ու այնպիսի կազմակերպություններին, ինչպիսիք են բնապահպանական, սպառողական կազմակերպությունները, բնակչության խոցելի խմբերի շահերը ներկայացնող կազմակերպությունները, այլ առողջապահական մարմիններ և համապատասխան արդյունաբերական միությունները, տրամադրում են հատուկ կարճաժամկետ գործողությունների ծրագրերի արդյունավետության ու բովանդակության վերաբերյալ իրենց ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև դրանց իրականացման մասին տեղեկություններ:

4. Հանձնաժողովը պետք է, առաջին անգամ, նախքան 2010 թվականի հունիսի 11-ը և դրանից հետո պարբերաբար, հրապարակի կարճաժամկետ գործողությունների ծրագրերի կազմման լավագույն փորձի՝ ներառյալ բնակչության խոցելի խմբերը, այդ թվում՝ երեխաների պաշտպանությանն ուղղված լավագույն փորձի օրինակները:

Հոդված 25

Օդի անդրսահմանային աղտոտումը

1. Եթե որևէ զգուշացման շեմ, սահմանային թույլատրելի նորմա կամ նպատակային արժեք, ինչպես նաև համապատասխան թույլատրելի մարժա կամ երկարաժամկետ նպատակ գերազանցվել է օդն աղտոտող նյութերի կամ դրանց պրեկուրսորների անդրսահմանային էական տեղաշարժի հետևանքով, ապա համապատասխան անդամ պետությունները, հարկ եղած դեպքում, կազմակերպում են համատեղ գործողություններ, ինչպես օրինակ՝ 23-րդ հոդվածին համապատասխան համատեղ և համակարգված օդի որակի պահպանության ծրագրերի մշակում՝ պատշաճ, սակայն համաչափ միջոցների կիրառմամբ վերացնելու նման գերազանցումները:

2. Հանձնաժողովը հրավիրվում է մասնակցելու և օժանդակելու 1-ին պարբերության մեջ նշված ցանկացած համագործակցությանը: Հանձնաժողովը հարկ եղած դեպքում քննարկում է, հաշվի առնելով 2001/81/ԵՀ Հրահանգի 9-րդ հոդվածին համապատասխան

սահմանված զեկույցները, Համայնքի մակարդակով հետագա քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը՝ անդրսահմանային աղտոտման հանգեցնող պրեկուրսորների արտանետումները նվազեցնելու համար:

3. Անդամ պետությունները, 24–րդ հոդվածին համապատասխանելու դեպքում, մշակում և իրականացնում են այլ անդամ պետությունների գոտիները ներառող համատեղ կարճաժամկետ գործողությունների ծրագրեր: Անդամ պետություններն ապահովում են, որ հարակից գոտիները, որոնց մասով այլ անդամ պետություններ մշակել են կարճաժամկետ գործողությունների ծրագրեր, ստանան բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

4. Եթե տեղեկացման կամ զգուշացման շեմերը գերազանցվել են ազգային սահմաններին հարակից գոտիներում կամ ագլոմերացիաներում, այդ մասին տեղեկությունները հնարավորինս շուտ փոխանցվում են հարևան անդամ պետությունների իրավասու մարմիններին: Այդ տեղեկությունները մատչելի են դարձվում նաև հանրության համար:

5. Առաջին և 3–րդ պարբերություններով նախատեսված ծրագրերը մշակելիս և 4–րդ պարբերության համաձայն հանրությանը տեղեկացնելիս անդամ պետությունները, հարկ եղած դեպքում, փորձում են համագործակցել երրորդ երկրների, մասնավորապես՝ թեկնածու պետությունների հետ:

ԳԼՈՒԽ V

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 26

Հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հանրությունը, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունները, ինչպես, օրինակ, բնապահպանական, սպառողական կազմակերպությունները, բնակչության խոցելի խմբերի շահերը ներկայացնող կազմակերպությունները, այլ առողջապահական մարմիններ և

համապատասխան արդյունաբերական միությունները, պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացված լինեն հետևյալի մասին.

ա) մթնոլորտային օդի որակի մասին՝ XVI հավելվածին համապատասխան.

բ) վերջնաժամկետի հետաձգման վերաբերյալ ցանկացած որոշման մասին՝ 22(1) հոդվածին համապատասխան.

գ) ցանկացած ազատման մասին՝ համաձայն 22(2) հոդվածի.

դ) 22(1) և 23-րդ հոդվածներով նախատեսված օդի որակի ծրագրերի և 17(2) հոդվածում նշված ծրագրերի մասին:

Տեղեկությունները տրամադրվում են անվճար՝ ցանկացած դյուրամատչելի միջոցով, այդ թվում՝ համացանցով կամ հեռահաղորդակցության այլ համապատասխան միջոցներով, և բավարարում են 2007/2/ԵՀ հրահանգով սահմանված պահանջները:

2. Անդամ պետությունները հանրությանն են ներկայացնում սույն Հրահանգում ներառված բոլոր աղտոտող նյութերի վերաբերյալ տարեկան հաշվետվությունները:

Այդ հաշվետվություններում ամփոփվում են սահմանային թույլատրելի նորմաների, նպատակային արժեքների, տեղեկացման և զգուշացման շեմերի գերազանցումների մակարդակները՝ միջինացված ըստ ժամանակահատվածների: Այդ տեղեկություններին կցվում են այդ գերազանցումների հետևանքների գնահատումների ամփոփագրերը: Նշված հաշվետվությունները կարող են, հարկ եղած դեպքում, ներառել անտառների պաշտպանության մասին լրացուցիչ տվյալներ, ինչպես նաև տեղեկություններ այն աղտոտող նյութերի մասին, որոնք սույն Հրահանգի ներքո ենթակա են դիտանցման, ինչպես, օրինակ, X հավելվածի Բ մասում նշված՝ որոշ չկարգավորվող, մասնավորապես՝ օգոնային շերտը քայքայող նյութերի մասին:

3. Անդամ պետությունները հանրությանը տեղեկացնում են 3-րդ հոդվածում նշված խնդիրների համար պատասխանատու իրավասու իշխանության կամ մարմնի մասին:

Տեղեկությունների և հաշվետվությունների տրամադրումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ մթնոլորտային օդի որակի մասին տեղեկությունները Հանձնաժողովին են փոխանցվում 28(2) հոդվածում նշված կիրարկող միջոցներով սահմանված ժամկետում:

2. Ցանկացած դեպքում, սահմանային թույլատրելի նորմաների և կրիտիկական մակարդակների ապահովումն ու նպատակային արժեքներին հասնելը գնահատելու նպատակով, այդ տեղեկությունները Հանձնաժողովին պետք է փոխանցվեն ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա ավարտից ինն ամիս հետո և պարունակեն՝

ա) տվյալ տարում 4–րդ հոդվածով սահմանված գոտիների և ազլոմերացիաների ցանկում և դրանց սահմանների մասով կատարված փոփոխությունները,

բ) այն գոտիների և ազլոմերացիաների ցանկը, որտեղ մեկ կամ ավելի աղտոտող նյութերի մակարդակները գերազանցում են սահմանային թույլատրելի նորմաները և, համապատասխան դեպքերում, թույլատրելի մարժաները կամ գերազանցում են նպատակային արժեքները, կամ կրիտիկական մակարդակները. այդ գոտիների կամ ազլոմերացիաների մասով տեղեկությունները պետք է պարունակեն նաև՝

i) գնահատված կոնցենտրացիաները և, համապատասխան դեպքում, այդ կոնցենտրացիաների դիտարկման ամսաթվերն ու ժամանակահատվածները,

ii) հարկ եղած դեպքում, համապատասխանաբար 20–րդ և 21–րդ հոդվածներով նախատեսված՝ բնական աղբյուրներից և ձմռանը ճանապարհներին ավազ կամ աղ լցնելու պատճառով պինդ մարմինների օդ բարձրանալու հետևանքով աղտոտման գնահատումները:

3. 1–ին և 2–րդ պարբերությունները կիրառվում են 28(2) հոդվածում նշված կիրարկման միջոցներն ուժի մեջ մտնելուց հետո երկրորդ օրացուցային տարվա սկզբից հավաքված տեղեկությունների նկատմամբ:

Կիրարկող միջոցները

1. Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները, այն է՝ I – VI,

VIII– X և XV հավելվածները, պետք է ընդունվեն 29(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Այդուհանդերձ, փոփոխությունները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոփոխեն հետևյալը.

ա) VII և XI– XIV հավելվածներում նշված սահմանային թույլատրելի նորմաները, վնասակար ներգործության նվազեցման նպատակները, կրիտիկական մակարդակները, նպատակային արժեքները, տեղեկացման կամ զգուշացման շեմերը կամ երկարաժամկետ նպատակները,

բ) «ա» կետում նշված ցուցանիշների ապահովման ամսաթվերը:

2. Հանձնաժողովը, 29(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան, որոշում է 27–րդ հոդվածի համաձայն անդամ պետություններին տրամադրվելիք լրացուցիչ տեղեկությունների շրջանակը, ինչպես նաև դրանց ներկայացնելու ժամկետները:

Հանձնաժողովը որոշում է նաև տվյալների մասին զեկուցումը և անդամ պետություններում մթնոլորտային օդի աղտոտումը չափող դիտացանցերից և առանձին դիտակայաններից տեղեկությունների ու տվյալների փոխանակումը դյուրացնելու եղանակները՝ 29(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

3. Հանձնաժողովը կազմում է 6(5) հոդվածում նշված՝ ընդհանուր դիտակայաններ ձևավորելու մասին համաձայնագրեր կնքելու վերաբերյալ ուղեցույցները:

4. Հանձնաժողովը VI հավելվածի Բ մասում նշված համարժեքությունը ներկայացնելու մասին ուղեցույց է հրապարակում :

ԿՈՄԻՏԵՆ, ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 29

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է Մթնոլորտային օդի որակի հարցերով կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
Թիվ 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:
3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 30

Պատժամիջոցները

Անդամ պետությունները պետք է սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային իրավական ակտերի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ սահմանեն և ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ դրանց կիրառումն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:

Չեղյալ ճանաչող և անցումային դրույթներ

1. 2010 թվականի հունիսի 11-ից 96/62/ԵՀ, 1999/30/ԵՀ, 2000/69/ԵՀ և 2002/3/ԵՀ հրահանգներն ուժը կորցնում են՝ չհակասելով նշված հրահանգների փոխատեղման կամ կիրառման ժամկետների մասով անդամ պետությունների պարտավորություններին:

Այդուհանդերձ, 2008 թվականի հունիսի 11-ից կիրառվում է հետևյալը.

ա) 96/62/ԵՀ հրահանգում 12-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"1. «1. Տասնմեկերորդ հոդվածի ներքո տրամադրվող տեղեկությունների փոխանցման մանրամասներն ընդունվում են 3-րդ պարբերության մեջ նշված ընթացակարգին համապատասխան:».

բ) 1999/30/ԵՀ հրահանգից հանել 7(7) հոդվածը, VIII հավելվածի I կետի 1-ին ծանոթագրությունը և IX հավելվածի VI կետը.

գ) 2000/69/ԵՀ հրահանգից հանել 5(7) հոդվածը և VII հավելվածի III կետը.

դ) 2002/3/ԵՀ հրահանգից հանել 9(5) հոդվածը և VIII հավելվածի II կետը:

2. Չնայած 1-ին պարբերության առաջին ենթապարբերությանը՝ հետևյալ հոդվածներն ուժի մեջ են մնում.

ա) 96/62/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածը՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը.

բ) 96/62/ԵՀ հրահանգի 11(1) հոդվածը և 2002/3/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը՝ մինչև սույն Հրահանգի 28(2) հոդվածում նշված կիրարկման միջոցներն ուժի մեջ մտնելուց հետո երկրորդ օրացուցային տարվա ավարտը.

գ) 1999/30/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը՝ մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Ուժը կորցրած հրահանգին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ և դիտվում են XVII հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակին համապատասխան:

4. 97/101/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է համարվում սույն Հրահանգի 28(2) հոդվածում նշված կիրարկման միջոցներն ուժի մեջ մտնելուց հետո երկրորդ օրացուցային տարվա ավարտին:

Այդուհանդերձ, 97/101/ԵՀ որոշման 7-րդ հոդվածի երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերությունները հանվում են 2008 թվականի հունիսի 11-ին:

Հոդված 32

Վերանայումը

1. Հանձնաժողովը 2013 թվականին վերանայում է ՊՄ_{2.5}-ին և, հարկ եղած դեպքում, մյուս աղտոտող նյութերին առնչվող դրույթներն ու համապատասխան առաջարկ ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

Ինչ վերաբերում է ՊՄ_{2.5}-ին, վերանայումը ձեռնարկվում է վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակը փոփոխելու համար օրենքով պարտադիր համարվող վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակը որոշելու և 15-րդ հոդվածով սահմանված վնասակար ներգործության կոնցենտրացիայի մասով պարտավորությունը վերանայելու նպատակով՝ մասնավորապես հաշվի առնելով հետևյալ գործոնները՝

- Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից կամ մյուս համապատասխան կազմակերպություններից ստացված ամենաթարմ գիտական տեղեկությունները.
- անդամ պետություններում օդի որակն ու նվազեցման հնարավորությունները.
- 2001/81/ԵՀ հրահանգի խմբագրումը.
- օդը աղտոտող նյութերի մասով Համայնքի մակարդակով նվազեցման միջոցների իրականացման մեջ գրանցված առաջընթացը:

2. Հանձնաժողովը պետք է հաշվի առնի ՊՄ_{2.5}-ի համար առավել հավակնոտ սահմանային թույլատրելի նորմա սահմանելու հնարավորությունը, վերանայի ՊՄ_{2.5}-ի երկրորդ փուլի ինդիկատիվ սահմանային թույլատրելի նորման և քննարկի այն հաստատելու կամ փոփոխելու հարցը:

3. Որպես վերանայման մաս՝ Հանձնաժողովը նաև մշակում է ՊՄ₁₀-ի և ՊՄ_{2.5}-ի կոնցենտրացիաների դիտանցման փորձի ու անհրաժեշտության վերաբերյալ հաշվետվություն՝ հաշվի առնելով ավտոմատ չափումների մեթոդներում տեղ գտած տեխնիկական առաջընթացը: Պետք է հարկ եղած դեպքում առաջարկվեն ՊՄ₁₀-ի և ՊՄ_{2.5}-ի կոնցենտրացիաների դիտարկման նոր ստանդարտ մեթոդներ:

Հոդված 33

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը՝ նախքան 2010 թվականի հունիսի 11-ը: Նրանք անմիջապես այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Այդուհանդերձ, անդամ պետություններն ապահովում են, որ ամենաուշը 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ քաղաքային տարածքներում ստեղծվեն ՊՄ_{2.5}-ի կոնցենտրացիաները չափող՝ բավարար թվով դիտակայաններ՝ վնասակար ներգործության միջինացված ցուցանիշը V հավելվածի Բ մասին համապատասխան հաշվարկելու համար այնպես, որ ապահովվի XIV հավելվածի Ա մասում նշված ժամկետների և պահանջների հետ համապատասխանությունը:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով պետք է ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 34

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում իր հրապարակման օրը:

Հոդված 35

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2008 թվականի մայիսի 21-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Յ. Լենարչիչ

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ա. Մթնոլորտային օդի որակի գնահատման տվյալների որակի պահանջները

	Ծծմբային անհիդրիդ, ազոտի երկօքսիդ և ազոտի օքսիդներ ու շմուլ գազ	բենզոլ	պինդ մարմիններ (ՊՄ ₁₀ , ՊՄ _{2.5}) և կապար	օզոն և հարակից NO և NO ₂
Ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներ ²¹				
Սխալանքը/անորոշությունը	15 %	25 %	25 %	15 %
Հավաքված նվազագույն տվյալները	90 %	90 %	90 %	90 %՝ ամռան ընթացքում, 75 %՝ ձմռան ընթացքում
Նվազագույն ժամանակահատվածը				
– քաղաքային տարածք և ավտոճանապարհ	—	35 % ²²	—	—
– արդյունաբերական տարածքներ	—	90 %	—	—
Ինդիկատիվ չափումներ				
Սխալանքը/անորոշությունը	25 %	30 %	50 %	30 %
Հավաքված նվազագույն տվյալները	90 %	90 %	90 %	90 %
Նվազագույն	14 % ²⁴	14 % ²³	14 % ²⁴	> 10 %՝ ամառվա

²¹ Անդամ պետությունները բենզոլի, կապարի և պինդ մարմինների համար շարունակական չափումների փոխարեն կարող են կիրառել կամընտիր չափումներ, եթե Հանձնաժողովին կարող են ապացուցել, որ թույլատրելի շեղումները՝ ներառյալ կամընտիր նմուշառման հետևանքով առաջացած շեղումները, գտնվում են 25 %-ի որակի նպատակային սահմանի շրջանակում և, որ կամընտիր չափումների ժամանակահատվածն ավելի մեծ է, քան ինդիկատիվ չափումների համար նախատեսված ժամանակահատվածը: Կամընտիր նմուշառումները պետք է հավասարապես բաշխված լինեն տարվա կտրվածքով՝ արդյունքների ներկայացուցչականությունն ապահովելու համար: Կամընտիր նմուշառման արդյունքում առաջացած շեղումները կարող են որոշվել «Օդի որակ. օդի որակի չափումների միջինացված ժամկետում արձանագրված շեղման որոշում» ISO 11222 (2002) ստանդարտով սահմանված ընթացակարգով: Եթե ՊՄ₁₀-ի սահմանային թույլատրելի նորմային ներկայացվող պահանջները գնահատելու համար օգտագործվում են կամընտիր չափումներ, ապա գերազանցումների թվի փոխարեն, որի վրա մեծապես ազդում է տվյալների շրջանակը, պետք է գնահատվի 90,4 պրոցենտիլը (որը պետք է պակաս կամ հավասար լինի 50 մկգ/մ³-ին):

²² Բաշխված է տարվա կտրվածքով՝ կլիմայի և երթևեկության տարբեր պայմանների դեպքում պատկերը ներկայացնելու նպատակով:

Ժամանակահատվածը				ընթացքում
Մոդելավորման սխալանքը				
Մեկ ժամում	50 %	—	—	50 %
Ութ ժամվա միջինը	50 %	—	—	50 %
Օրական միջինը	50 %	—	դեռևս որոշված չի	—
Տարեկան միջինը	30 %	50 %	50 %	—
Օբյեկտիվ գնահատում				
Սխալանք	75 %	100 %	100 %	75 %

Գնահատման մեթոդների սխալանքը (արտահայտված 95% վստահելիության մակարդակով) կգնահատվի ՍԵԿ-ի՝ Չափումների սխալանքների արտահայտման վերաբերյալ ուղեցույցի (ENV 13005-1999), ISO 5725:1994-ի մեթոդաբանության և ՍԵԿ-ի «Օդի որակ. մթնոլորտային օդի ստանդարտ չափումների մեթոդներում սխալանքների հաշվարկման եղանակը» հաշվետվության (CR 14377:2002E) մեջ ներկայացված ուղեցույցի սկզբունքներին համապատասխան: Վերոնշյալ աղյուսակում ներկայացված սխալանքի տոկոսները տրված են սահմանային թույլատրելի նորմայի (կամ, օգոնի դեպքում, նպատակային արժեքի) հիման վրա հաշվարկված ժամկետի ընթացքում միջինացված առանձին դիտարկումների համար՝ 95% վստահելիության միջակայքով: Ամրակայված դիտակայաններից կատարվող չափումների դեպքում սխալանքը համարվում է կիրառելի՝ համապատասխան սահմանային թույլատրելի նորմայի (կամ, օգոնի դեպքում, նպատակային արժեքի) սահմաններում:

Մոդելավորման անորոշությունը սահմանվում է որպես տվյալ ժամանակահատվածում սահմանային թույլատրելի նորմայի (կամ օգոնի դեպքում՝ նպատակային արժեքի) հիման վրա 90% առանձին դիտակետերում չափված և հաշվարկված կոնցենտրացիաների մակարդակների առավելագույն շեղում՝ հաշվի չառնելով այն, թե կոնկրետ երբ է տեղի

²³ Կամընտիր եղանակով չափումներ շաբաթական մեկ օր, որը հավասարապես բաշխված է տարվա ընթացքում, կամ ութ շաբաթ, որը նույնպես հավասարապես բաշխված է տարվա ընթացքում:

²⁴ Կամընտիր եղանակով չափումներ շաբաթական մեկ անգամ, որը հավասարապես բաշխված է տարվա ընթացքում, կամ ութ շաբաթ, որը նույնպես հավասարապես բաշխված է տարվա ընթացքում:

ունեցել կոնցենտրացիայի փոփոխությունը: Մոդելավորման դեպքում սխալանքը համապատասխան սահմանային թույլատրելի նորմայի (կամ, օգոնի դեպքում, նպատակային արժեքի) սահմաններում կիրառելի է համարվում: Մոդելավորման արդյունքների հետ համեմատության համար ընտրված՝ ամրակայված դիտակայաններից կատարվող չափումները պետք է ներկայացնեն այն շրջանակը, որն ընդգրկել է մոդելը:

Օբյեկտիվ գնահատման անորոշությունը սահմանվում է որպես տվյալ ժամանակահատվածում սահմանային թույլատրելի նորմայի (կամ օգոնի դեպքում՝ ելակետային արժեքի) հիման վրա չափված և հաշվարկված կոնցենտրացիաների մակարդակների առավելագույն շեղում՝ հաշվի չառնելով այն, թե կոնկրետ երբ է տեղի ունեցել կոնցենտրացիայի փոփոխությունը:

Նվազագույն թվով տվյալների հավաքմանը և ժամկետներին ներկայացվող պահանջները չեն տարածվում կանոնավոր ստուգաճշտման կամ սարքավորումների սովորական սպասարկման արդյունքում տվյալների կորուստների վրա:

Բ. Օդի որակի գնահատման արդյունքները

Այն գոտիներում կամ ագլոմերացիաներում, որտեղ դիտարկումների արդյունքում ստացված տեղեկությունները լրացվում են չափումներից բացի այլ միջոցներով կամ որտեղ այդ միջոցները օդի որակի գնահատման միակ միջոցն են, պետք է հավաքվեն հետևյալ տեղեկությունները՝

- իրականացվող գնահատման գործողությունների նկարագիրը,
- կիրառվող հատուկ մեթոդները՝ այդ մեթոդների նկարագրին հղումներով,
- տվյալների և տեղեկությունների աղբյուրները,
- արդյունքների՝ ներառյալ թույլատրելի շեղումները և, մասնավորապես, գոտում կամ ագլոմերացիայում այն յուրաքանչյուր տարածքի սահմանները կամ, համապատասխան դեպքում, ճանապարհի այն հատվածը, որտեղ կոնցենտրացիաները գերազանցում են սահմանային թույլատրելի նորման, նպատակային արժեքը կամ, կիրառելիության դեպքում, երկարաժամկետ նպատակը և թույլատրելի մարժան, ինչպես նաև վերին կամ ստորին գնահատման

շեմերը գերազանցող կոնցենտրացիաներ գրանցած ցանկացած տարածքի նկարագրությունը,

- մարդու առողջության պաշտպանության նպատակով որևէ սահմանային թույլատրելի նորման գերազանցող կոնցենտրացիաների հետևանքով բացասական ներգործության ենթարկվող բնակչության թիվը:

Գ. Մթնոլորտային օդի որակի գնահատման որակի ապահովում. տվյալների վալիդացում

1. Ա մասում սահմանված չափումների ճշտությունն ապահովելու և տվյալների որակի պահանջները բավարարելու նպատակով՝ 3-րդ հոդվածին համապատասխան նշանակված իրավասու իշխանություններն ու մարմիններն ապահովում են, որ՝

- 6-րդ և 9-րդ հոդվածներին համապատասխան մթնոլորտային օդի որակի գնահատման առնչությամբ ձեռնարկված բոլոր չափումները հետազօծելի են՝ ISO/IEC 17025:2005-ի 5.6.2.2 բաժնով սահմանված պահանջներին համապատասխան,
- դիտանցման ցանցերը և առանձին դիտակայանները շահագործող հաստատություններն ունեն որակի ապահովման և հսկման գործող համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս պարբերաբար սպասարկելու չափիչ սարքերը՝ դրանց ճշգրտությունն ապահովելու համար,
- տվյալների հավաքման և տրամադրման համար գործում է որակի ապահովման ու հսկման գործընթաց և, որ այս խնդրով զբաղվող հաստատություններն ակտիվորեն մասնակցում են համայնքի մակարդակով որակի ապահովման համապատասխան ծրագրերին,
- 3-րդ հոդվածին համապատասխան նշանակված իրավասու իշխանության կամ մարմնի կողմից ընտրված ազգային լաբորատորիաները, որոնցում անցկացվում են սույն Հրահանգով կարգավորվող և համայնքի մակարդակով իրականացվող աղտոտող նյութերի կոնցենտրացիաների համեմատություններ, մինչև 2010 թվականը հավաստագրված են EN/ISO 17025-ին համապատասխան՝ VI հավելվածում նշված ստանդարտ մեթոդների կիրառման մասով: Անդամ

պետությունների տարածքում այս լաբորատորիաները ներգրավվում են Հանձնաժողովի կողմից կազմակերպված՝ Համայնքի մակարդակով որակի ապահովման ծրագրերի համակարգման աշխատանքներում, ինչպես նաև ազգային մակարդակում համակարգում են ստանդարտ մեթոդների պատշաճ կիրառումը և ոչ ստանդարտ մեթոդների համարժեքության ապահովումը:

2. Բոլոր տվյալները, որոնք ներկայացվում են 27-րդ հոդվածի համաձայն, համարվում են վավեր՝ բացառությամբ որպես ժամանակավոր նշված տվյալների:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Տվյալ գոտու կամ ագլոմերացիայի մթնոլորտային օդում ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների, պինդ մարմինների (ՊՄ₁₀ և ՊՄ_{2.5}), կապարի, բենզոլի և շմոլ գազի կոնցենտրացիաների գնահատման պահանջների որոշումը

Ա. Գնահատման վերին և ստորին շեմերը

Կիրառվում են գնահատման վերին և ստորին հետևյալ շեմերը.

1. Ծծմբային անհիդրիդ

	Առողջության պաշտպանություն	Բուսականության պաշտպանություն
Գնահատման վերին շեմ	24-ժամյա սահմանային թույլատրելի նորմայի 60 %-ը (75 մկգ/մ ³ , որը յուրաքանչյուր օրացուցային տարում չպետք է գերազանցվի ավելի քան երեք անգամ)	ձմեռային սեզոնի կրիտիկական մակարդակի 60 %-ը (12 մկգ/մ ³)
Գնահատման ստորին շեմ	24-ժամյա սահմանի արժեքի 40 %-ը (50 մկգ/մ ³ , որը յուրաքանչյուր օրացուցային տարում չպետք է գերազանցվի ավելի քան երեք անգամ)	ձմեռային սեզոնի կրիտիկական մակարդակի 40 %-ը (8 մկգ/մ ³)

2. Ազոտի երկօքսիդ և ազոտի օքսիդներ

	Մարդու առողջության պաշտպանության ամենժամյա սահմանային թույլատրելի նորման (NO ₂)	Մարդու առողջության պաշտպանության տարեկան սահմանային թույլատրելի նորման (NO ₂)	Բուսականության և բնական էկոհամակարգերի պաշտպանության տարեկան կրիտիկական մակարդակը (NO _x)
Գնահատման վերին շեմ	սահմանային թույլատրելի նորմայի 70 %-ը (140 մկգ/մ ³ , որը յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 18 անգամ)	սահմանային թույլատրելի նորմայի 80 %-ը (32 մկգ/մ ³)	կրիտիկական մակարդակի 80 %-ը (24 մկգ/մ ³)
Գնահատման ստորին շեմ	սահմանային թույլատրելի նորմայի 50 %-ը (100 մկգ/մ ³ , որը յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 18 անգամ)	սահմանային թույլատրելի նորմայի 65 %-ը (26 մկգ/մ ³)	կրիտիկական մակարդակի 65 %-ը (19.5 մկգ/մ ³)

3. Պինդ մարմիններ (ՊՄ₁₀, ՊՄ_{2.5})

	PM ₁₀ -ի 24-ժամվա միջինը	PM ₁₀ -ի տարեկան միջինը	PM _{2.5} -ի տարեկան միջինը ²⁵
Գնահատման վերին շեմ	սահմանային թույլատրելի նորմայի 70 %-ը (35 մկգ/մ ³ , որը յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 35 անգամ)	սահմանային թույլատրելի նորմայի 70 %-ը (28 մկգ/մ ³)	սահմանային թույլատրելի նորմայի 70 %-ը (17 մկգ/մ ³)
Գնահատման ստորին շեմ	սահմանային թույլատրելի նորմայի 50 %-ը (25 մկգ/մ ³ , որը յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 35 անգամ)	սահմանային թույլատրելի նորմայի 50 %-ը (20 մկգ/մ ³)	սահմանային թույլատրելի նորմայի 50 %-ը (12 մկգ/մ ³)

4. Կապար

	Տարեկան միջինը
Գնահատման վերին շեմը	սահմանային թույլատրելի նորմայի 70 %-ը (0.35 մկգ/մ ³)
Գնահատման ստորին շեմը	սահմանային թույլատրելի նորմայի 50 %-ը (0.25 մկգ/մ ³)

5. Բենզոլ

	Տարեկան միջինը
Գնահատման վերին շեմը	սահմանային թույլատրելի նորմայի 70 %-ը (3.5 մկգ/մ ³)
Գնահատման ստորին շեմը	սահմանային թույլատրելի նորմայի 40 %-ը (2 մկգ/մ ³)

6. Շմոլ գազ

	Ութամյա միջինը
Գնահատման վերին շեմը	սահմանային թույլատրելի նորմայի 70 %-ը (7 մկգ/մ ³)
Գնահատման ստորին շեմը	սահմանային թույլատրելի նորմայի 50 %-ը (5 մկգ/մ ³)

²⁵ ՊՄ_{2.5}-ի գնահատման վերին և ստորին շեմերը չեն կիրառվում մարդու առողջության պաշտպանության համար ՊՄ_{2.5}-ի վնասակար ներգործության նվազեցման սահմանի պահպանումը գնահատելու համար կատարվող չափումների նկատմամբ:

Բ. Գնահատման վերին և ստորին շեմերի գերազանցումների որոշումը

Գնահատման վերին և ստորին շեմերի գերազանցումները, անհրաժեշտ տվյալների առկայության դեպքում, որոշվում են նախորդ հինգ տարիների ընթացքում գրանցված կոնցենտրացիաների հիման վրա: Գնահատման շեմը համարվում է գերազանցված, եթե այն գերազանցվել է նշված հինգ տարիներից առնվազն երեք տարիներից յուրաքանչյուրի ընթացքում:

Եթե հինգ տարուց պակաս ժամանակահատվածի համար տվյալներ են կուտակված, անդամ պետությունները կարող են, գնահատման վերին և ստորին շեմերի գերազանցումները որոշելու համար, մեկ տարվա ընթացքում կատարված կարճաժամկետ և առավելագույն կոնցենտրացիաներ գրանցած վայրերում չափումների արդյունքում ստացված տվյալները համատեղել արտանետումների կադաստրի ու մոդելավորման մեթոդներով ստացված արդյունքների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Մթնոլորտային օդի որակի գնահատումը և ծծմբի անհիդրիդի, ազոտի օքսիդի ու ազոտի օքսիդների, պինդ մարմինների (ՊՄ_{10} , $\text{ՊՄ}_{2,5}$), կապարի, բենզոլի և շմոլ գազի կոնցենտրացիաների չափումների համար նմուշառման դիտակետերի տեղակայումը

Ա. Ընդհանուր դրույթներ

Մթնոլորտային օդի որակը բոլոր գոտիներում և ագլոմերացիաներում պետք է գնահատվի հետևյալ չափորոշիչներին համապատասխան՝

1. Մթնոլորտային օդի որակը պետք է գնահատվի բոլոր վայրերում, բացառությամբ 2-րդ պարբերության մեջ թվարկվածների՝ ամրակայված նմուշառման դիտակետերից չափումների համար Բ և Գ մասերով սահմանված չափորոշիչներին համապատասխան: Բ և Գ մասերով սահմանված սկզբունքները կիրառվում են նաև այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են այն հատուկ վայրերի ընտրության համար, որտեղ որոշվում են համապատասխան աղտոտող նյութերի կոնցենտրացիաներն այն դեպքում, երբ մթնոլորտային օդի որակը գնահատվում է ինդիկատիվ չափումների կամ մոդելավորման միջոցով:

2. Մարդու առողջության պաշտպանության նպատակով սահմանված սահմանային թույլատրելի նորմաների հետ համապատասխանությունը չի գնահատվում հետևյալ վայրերում՝

ա) այն տարածքներում գտնվող վայրերում, որտեղ բնակչությունը մուտք չունի և որը մարդկանց մշտական բնակության վայր չէ,

բ) 2(1) հոդվածին համապատասխան՝ այն գործարանային կամ արտադրական տարածքներում, որտեղ գործում են աշխատավայրում առողջության պահպանմանը և անվտանգությանն առնչվող համապատասխան դրույթները,

գ) երթևեկելի ճանապարհներում. ճանապարհների կենտրոնում գտնվող բաժանարար տարածքներում, բացառությամբ, եթե այդ մասում առկա է հետիոտնի անցում:

Բ. Նմուշառման դիտակետերի մեծամասշտաբ տեղակայումը

1. Մարդու առողջության պաշտպանությունը

ա) Մարդու առողջության պաշտպանության նպատակով տեղակայված նմուշառման դիտակետերը պետք է տեղակայված լինեն այնպես, որ հնարավոր լինի տվյալներ տրամադրելու հետևյալի մասին՝

- սահմանային թույլատրելի նորմայի (նորմաների) միջինացված ժամանակահատվածի համեմատ էապես երկար ժամանակ տևող՝ բնակչության վրա հնարավոր ուղղակի կամ անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող ամենաբարձր կոնցենտրացիաներ գրանցած գոտիների և ագլոմերացիաների մասին.

- գոտիներում և ագլոմերացիաներում գտնվող այլ տարածքներում կոնցենտրացիաների մասին, որոնք ներկայացնում են բնակչության վրա վնասակար ներգործության ընդհանուր պատկերը.

բ) Նմուշառման դիտակետերը պետք է ընդհանուր առմամբ տեղեկայվեն այնպես, որ չափումները չընդգրկեն միայն դրա անմիջական հարևանությամբ տարածքի մի շատ փոքր հատված, այսինքն՝ դրանք պետք է տեղակայված լինեն այնպես, որ նմուշառված օդը տիպային լինի փողոցի առնվազն 100մ երկարությամբ երթևեկելի հատվածի օդի որակի համար և, հնարավորության դեպքում, առնվազն 250մ×250մ արտադրական տարածքի համար.

գ) Ֆոնային աղտոտման դիտանցի քաղաքային տարածքները պետք է տեղակայված լինեն այնպես, որ այդ վայրի աղտոտման մակարդակն արտացոլի կայանի ուղղությամբ շրջակա բոլոր աղտոտման աղբյուրներից փչող քամու հետ եկող արտանետումների կոնցենտրացիան: Աղտոտված օդում չպետք է գերակայեն միայն մեկ աղբյուրից եկող աղտոտող նյութերը, եթե միայն այդ պատկերը բնորոշ է քաղաքային մեծ տարածքի համար: Այդ նմուշառման կետերը պետք է, որպես կանոն, ներկայացուցչական լինեն մի քանի քառակուսի կիլոմետր տարածքի համար.

դ) եթե նպատակը գյուղական տարածքների ֆոնային աղտոտման մակարդակը գնահատելն է, նմուշառման դիտակետի չափումները չպետք է ընդգրկեն տվյալ

վայրի հարևանությամբ գտնվող ագլոմերացիաների կամ արտադրական տարածքների, այն է՝ հինգ կիլոմետրից մոտ գտնվող վայրերի կոնցենտրացիաները,

- ե) Եթե գնահատվում են արտադրական աղբյուրների արտանետումները, առնվազն մեկ նմուշառման դիտակետ պետք է տեղակայված լինի տվյալ աղբյուրին ամենամոտ գտնվող բնակավայրում, որի ուղղությամբ նշված աղբյուրից փչում են քամիները: Եթե ֆոնային կոնցենտրացիան հայտնի չէ, հիմնական քամիների ուղղության վրա տեղակայվում է լրացուցիչ նմուշառման դիտակայան,
- զ) նմուշառման դիտակետերը հնարավորության դեպքում պետք է արտացոլեն ոչ անմիջական հարևանությամբ գտնվող համանման վայրերի կոնցենտրացիաները,
- է) մարդու առողջության պաշտպանության համար, անհրաժեշտության դեպքում, պետք է դիտարկել կղզիների վրա նմուշառման դիտակետերի տեղակայման կարիքը:

2. Բուսականության և բնական էկոհամակարգերի պահպանությունը

Բուսականության և բնական էկոհամակարգերի պահպանության համար տեղակայված նմուշառման դիտակետերը պետք է տեղակայված լինեն ագլոմերացիաներից ավելի քան 20 կմ, իսկ այլ կառուցապատված, արտադրական տարածքներից կամ օրական 50 000 ավտոմեքենայից ավելի բեռնվածությամբ ավտոճանապարհներից կամ հիմնական ճանապարհներից՝ ավելի քան 5կմ հեռավորության վրա այնպես, որ նմուշառման դիտակետի տեղակայումը ապահովի նմուշառված օդի տիպային լինելը՝ առնվազն 1000 քառակուսի կիլոմետր շրջակա տարածքի օդի որակի համար: Անդամ պետությունը կարող է նախատեսել, որ նմուշառման դիտակետը տեղակայված լինի ավելի փոքր հեռավորության վրա կամ ներկայացուցչական լինի ավելի փոքր տարածքի օդի որակի համար՝ հաշվի առնելով աշխարհագրական պայմանները կամ հատկապես խոցելի տարածքների պահպանության նկատառումներով:

Կղզիներում պետք է հաշվի առնվի օդի որակը չափելու անհրաժեշտությունը:

Գ. Նմուշառման դիտակետերի փոքրամասշտաբ տեղակայումը

Կիրառելիության դեպքում կիրառվում են հետևյալ պահանջները՝

- նմուշառման զննածողի (զոնդ) մուտքի մոտ օդի հոսանքը պետք է լինի անխափան (խոչընդոտներից զերծ առնվազն 270° կտրվածքով)՝ բացառելով նմուշառիչի շուրջը օդի հոսանքի որևէ խոչընդոտի առկայությունը (նմուշառիչը սովորաբար տեղակայվում է շենքերից, պատշգամբներից, ծառերից և այլ խոչընդոտներից մի քանի մետր հեռավորության վրա, իսկ կառուցապատվող հողակտորների եզրին հարակից տարածքի օդի որակը չափող նմուշառման դիտակետերի դեպքում՝ ամենամոտ շենքից 0.5 մետր հեռավորության վրա),
- ընդհանուր առմամբ, նմուշառման զննածողի մուտքը պետք է գետնից 1.5-ից (շնչառական գոտի) մինչև 4 մետր բարձրության վրա լինի: Որոշակի հանգամանքներում կարող է անհրաժեշտ լինել նմուշառման զննածողը տեղակայել ավելի բարձր (մինչև 8 մետր) մակարդակում: Ավելի բարձր տեղակայումը կարող է անհրաժեշտ լինել, եթե կայանը մեծ տարածքի համար ներկայացուցչական է.
- նմուշառման զննածողը չպետք է տեղակայված լինի աղբյուրների անմիջական հարևանությամբ՝ մթնոլորտային օդի հետ չխառնված արտանետումների ուղղակի ներմուտքից խուսափելու համար,
- նմուշառիչի արտանետման համար նախատեսված ելքը պետք է տեղակայված լինի այնպես, որ բացառվի արտանետված օդի վերաշրջանառությունը դեպի նմուշառիչ.
- բոլոր աղտոտող նյութերի մասով, երթևեկելի ճանապարհների նմուշառման զննածողը հիմնական խաչմերուկներից պետք է տեղակայված լինի առնվազն 25 մ, իսկ մայթեզրից՝ ոչ ավելի, քան 10 մ հեռավորության վրա:

Կարող են հաշվի առնվել նաև հետևյալ գործոնները՝

- ազդեցություն ունեցող աղբյուրները.
- անվտանգությունը.
- տարածքի մատչելիությունը.
- էլեկտրաէներգիայի և հեռախոսային կապի առկայությունը.

- շրջապատի համեմատ ընտրված վայրի տեսանելիությունը.
- հանրության և օպերատորների անվտանգությունը.
- տարբեր աղտոտող նյութերի համար նմուշառման դիտակետերի համատեղադրման նախընտրելիությունը.
- ծրագրման պահանջները:

Դ. Տարածքների ընտրության փաստաթղթավորումն ու վերանայումը

Տարածքների ընտրության ընթացակարգերը դասակարգման փուլերում պետք է ամբողջովին փաստաթղթավորված լինեն շրջակա տարածքի կողմնացուցային լուսանկարների և մանրամասն քարտեզի միջոցով: Տարածքները պարբերաբար վերանայվում են փաստաթղթերի համապատասխանության մասով՝ ապահովելու, որ ընտրության չափորոշիչները ժամանակի ընթացքում ուժի մեջ մնան:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԿՈՆՑԵՏՐԱՑԻԱՆԵՐԻՑ ԱՆԿԱԽ ՖՈՆԱՅԻՆ ԱՂՏՈՏՄԱՆ ԴԻՏԱՆՑԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ

Ա. Նպատակները

Չափումների հիմնական նպատակը ֆոնային կոնցենտրացիաների մասին պատշաճ տեղեկությունների ապահովումն է: Այդ տեղեկություններն անհրաժեշտ են առավել աղտոտված վայրերում գերազանցված կոնցենտրացիաները դիտարկելու, մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածումը գնահատելու, աղբյուրների բաշխվածության վերլուծությանը օժանդակելու և պինդ մարմինների նման աղտոտիչների մասին գաղափար կազմելու համար: Այն կարևոր է նաև քաղաքային տարածքներում մոդելավորման մեթոդների ավելի լայն կիրառման համար:

Բ. Նյութերը

ՊՄ_{2.5}-ի չափումները պետք է առնվազն ներառեն ընդհանուր կոնցենտրացիաների և համապատասխան միացությունների կոնցենտրացիաների չափումները՝ վերջիններիս քիմիական բաղադրությունը պարզելու նպատակով: Չափումները պետք է ընդգրկեն առնվազն հետևյալ քիմիական տարրերի մասով չափումներ.

SO ₄ ²⁻	Na ⁺	NH ₄ ⁺	Ca ₂ ⁺	տարրական ածխածին (SU)
NO ₃ ⁻	K ⁺	Cl ⁻	Mg ²⁺	օրգանական ածխածին (OU)

Գ. Տեղակայումը

Չափումները պետք է մասնավորապես իրականացվեն ֆոնային աղտոտման դիտանցի գյուղական տարածքներում՝ III հավելվածի Ա, Բ և Գ մասերին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ V

Մթնոլորտային օդում ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների, պինդ մարմինների (ՊՄ₁₀ և ՊՄ_{2.5}), կապարի, բենզոլի և շմոլ գազի կոնցենտրացիաները չափելու համար ամրակայված նմուշառման դիտակետերի նվազագույն թիվը որոշելու չափորոշիչները

Ա. Մարդու առողջության պաշտպանության նպատակով սահմանային թույլատրելի նորմաների և զգուշացման շեմի հետ համապատասխանության գնահատման համար ամրակայված նմուշառման դիտակետերի նվազագույն թիվն այն գոտիներում կամ ագլոմերացիաներում, որտեղ ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներն օդի որակի վերաբերյալ տվյալների ձեռքբերման միակ աղբյուրն են:

1. Ցրված աղբյուրներ

Ագլոմերացիայի կամ գոտու բնակչությունը (հազար)	Եթե առավելագույն կոնցենտրացիաները գերազանցում են գնահատման վերին շեմը ²⁶		Եթե առավելագույն կոնցենտրացիաները գտնվում են գնահատման վերին և ստորին շեմերի միջև	
	Աղտոտող նյութեր՝ բացառությամբ ՊՄ-ի	ՊՄ ²⁷ (ՊՄ ₁₀ և ՊՄ _{2.5} -ի գումարը)	Աղտոտող նյութեր՝ բացառությամբ ՊՄ-ի	ՊՄ ²⁷ (ՊՄ ₁₀ և ՊՄ _{2.5} -ի գումարը)
0-249	1	2	1	1
250-499	2	3	1	2
500-749	2	3	1	2
750-999	3	4	1	2
1000-1499	4	6	2	3

²⁶ Ծծմբային անհիդրիդի, պինդ մարմինների, բենզոլի և շմոլ գազի համար ներառել քաղաքային տարածքի ֆոնային աղտոտման առնվազն մեկ դիտակայան և ճանապարհային աղտոտման դիտանցման մեկ կայան՝ պայմանով, որ դա չի ավելացնի նմուշառման դիտակետերի թիվը: Նշված աղտոտող նյութերի համար անդամ պետությունում Ա(1) մասով պահանջվող՝ քաղաքային տարածքի ֆոնային աղտոտման դիտակայանների ընդհանուր թիվը և ճանապարհային աղտոտման դիտակայանների ընդհանուր թիվը չպետք է տարբերվեն ավելի քան 2 գործակցով: ՊՄ₁₀-ի մասով վերջին երեք տարիների ընթացքում սահմանային արժեքի գերազանցումներ գրանցած նմուշառման դիտակետերը շարունակվում են շահագործվել, եթե միայն դրանց վերատեղակայման անհրաժեշտություն չի ծագում՝ հատուկ հանգամանքների, մասնավորապես տարածքային ընդլայնման հետևանքով:

²⁷ Եթե 8-րդ հոդվածին համապատասխան ՊՄ_{2.5}-ի և ՊՄ₁₀-ի կոնցենտրացիաները չափվում են նույն դիտակայանում, դրանք համարվում են երկու տարբեր նմուշառման դիտակետերից չափված : Ա(1) մասով պահանջվող՝ ՊՄ_{2.5}-ի և ՊՄ₁₀-ի չափման նմուշառման դիտակետերի ընդհանուր թիվը անդամ պետությունում չպետք է տարբերվի ավելի քան 2 գործակցով, իսկ ագլոմերացիաների քաղաքային տարածքներում և քաղաքային վայրերում ՊՄ_{2.5}-ի չափման նմուշառման դիտակետերի թիվը պետք է համապատասխանի V հավելվածի Բ մասի պահանջներին:

1500-1999	5	7	2	3
2000-2749	6	8	3	4
2750-3749	7	10	3	4
3750-4749	8	11	3	6
4750-5999	9	13	4	6
≥ 6000	10	15	4	7

2. Անշարժ աղբյուրներ

Կետային աղբյուրներին հարող տարածքներում աղտոտում գնահատելու համար ամրակայված նմուշառման դիտակայանների թիվը հաշվվում է արտանետումների խտությունների, մթնոլորտային օդի աղտոտումը բաշխելու հնարավոր մոդելի և բնակչության վրա հնարավոր վնասակար ներգործության հիման վրա:

Բ. Մարդու առողջության պաշտպանության նպատակով ՊՄ_{2.5}-ի վնասակար ներգործության նվազեցման նպատակային սահմանի հետ համապատասխանության գնահատման համար ամրակայված նմուշառման դիտակայանների նվազագույն թիվը

Յուրաքանչյուր մեկ միլիոն բնակիչ ունեցող ագլոմերացիայում և 100 000 բնակչից ավելի բնակչություն ունեցող քաղաքային տարածքում այդ նպատակով շահագործվում է մեկ նմուշառման դիտակետ: Այդ նմուշառման դիտակետերը կարող են համընկնել Ա մասով նախատեսված նմուշառման դիտակետերի հետ:

Գ. Ագլոմերացիա չհամարվող գոտիներում բուսականության պաշտպանության նպատակով կրիտիկական մակարդակների հետ համապատասխանության գնահատման համար ամրակայված նմուշառման դիտակետերի նվազագույն թիվը

Եթե առավելագույն կոնցենտրացիաները գերազանցում են գնահատման վերին շեմը	Եթե առավելագույն կոնցենտրացիաները գտնվում են գնահատման վերին և ստորին շեմերի միջև
1 դիտակայան՝ յուրաքանչյուր 20 000 քառակուսի կիլոմետրի վրա	1 դիտակայան՝ յուրաքանչյուր 40 000 քառակուսի կիլոմետրի վրա

Կղզիների գոտիներում ամրակայված նմուշառման դիտակետերի թիվը հաշվարկվում է մթնոլորտային օդի աղտոտման բաշխման հնարավոր մոդելի և բուսականության վրա հնարավոր վնասակար ներգործության հիման վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների, պինդ մարմինների (ՊՄ₁₀ և ՊՄ_{2.5}), կապարի, բենզոլի, շմոլ գազի և օզոնի կոնցենտրացիաների գնահատման ստանդարտ մեթոդները

Ա. Չափումների ստանդարտ մեթոդները

1. Ծծմբային անհիդրիդի չափման ստանդարտ մեթոդը

Ծծմբային անհիդրիդի չափման ստանդարտ մեթոդը սահմանված է EN 14212:2005 «Մթնոլորտային օդի որակ. ծծմբային անհիդրիդի կոնցենտրացիան ուլտրամանուշակագույն լուսավորման միջոցով չափելու ստանդարտ մեթոդ» ստանդարտով:

2. Ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների չափման ստանդարտ մեթոդը

Ազոտի երկօքսիդի և ազոտի օքսիդների չափման ստանդարտ մեթոդը սահմանված է EN 14211:2005 «Մթնոլորտային օդի որակ. ազոտի երկօքսիդի և ազոտի մոնօքսիդի կոնցենտրացիան քիմիական լյումինեսցենցիայի միջոցով չափելու ստանդարտ մեթոդ» ստանդարտով:

3. Կապարի նմուշառման և չափման ստանդարտ մեթոդը

Կապարի նմուշառման ստանդարտ մեթոդը սահմանված է սույն Հավելվածի Ա(4) մասում: Կապարի չափման ստանդարտ մեթոդը սահմանված է EN 14902:2005 «Օդ բարձրացած պինդ մարմիններից ՊՄ₁₀-ի մեջ առկա կապարի (Pb), կադմիումի (Cd), արսենի (As) և նիկելի (Ni) չափման ստանդարտ մեթոդ» ստանդարտով:

4. ՊՄ₁₀-ի նմուշառման և չափման ստանդարտ մեթոդը

ՊՄ₁₀-ի նմուշառման և չափման ստանդարտ մեթոդը սահմանված է EN 12341:1999 «Օդի որակ. օդ բարձրացած պինդ մարմիններում ՊՄ₁₀-ի բաժնեմասի որոշումը. Չափման մեթոդների՝ ստանդարտ մեթոդների հետ համարժեքությունը պարզելու նպատակով իրականացվող ստանդարտ մեթոդ և փորձարկումների ընթացակարգեր» ստանդարտով:

5. ՊՄ_{2.5} նմուշառման և չափման ստանդարտ մեթոդը

ՊՄ_{2.5} նմուշառման և չափման ստանդարտ մեթոդը սահմանված է EN 14907:2005 «Օդաբարձրացած պինդ մարմիններում ՊՄ_{2.5}-ի բաժնեմասի որոշման գրավիմետրիկ չափումների ստանդարտ մեթոդ» ստանդարտով:

6. Բենզոլի նմուշառման և չափման ստանդարտ մեթոդը

Բենզոլի նմուշառման և չափման ստանդարտ մեթոդը սահմանվում է EN 14662:2005 «Մթնոլորտային օդի որակ. Բենզոլի կոնցենտրացիաների չափման ստանդարտ մեթոդ» ստանդարտի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով:

7. Շմոլ գազի չափման ստանդարտ մեթոդը

Շմոլ գազի չափման ստանդարտ մեթոդը սահմանված է EN 14626:2005 «Մթնոլորտային օդի որակ. շմոլ գազի կոնցենտրացիան ինֆրակարմիր չցրող սպեկտրադիտման միջոցով չափելու ստանդարտ մեթոդ» ստանդարտով:

8. Օզոնի մակարդակի չափման ստանդարտ մեթոդը

Օզոնի մակարդակի չափման ստանդարտ մեթոդը սահմանված է EN 14625:2005 «Մթնոլորտային օդի որակ. ծծմբային անհիդրիդի կոնցենտրացիան ուլտրամանուշակագույն լուսաչափման միջոցով չափելու ստանդարտ մեթոդ» ստանդարտով:

Բ. Համարժեքության ապահովումը

1. Անդամ պետությունը կարող է կիրառել ցանկացած այլ մեթոդ, եթե կարող է ցույց տալ, որ այն տալիս է Ա մասում նշված որևէ մեթոդին համարժեք արդյունք, կամ, պինդ մարմինների դեպքում, ցանկացած այլ մեթոդ, որի մասով տվյալ անդամ պետությունը կարող է ցույց տալ, որ էապես նման է ստանդարտ մեթոդին: Նշված մեթոդով այդ դեպքում ստացված արդյունքները պետք է ճշտվեն՝ ստանդարտ մեթոդի կիրառմամբ ստացված արդյունքներին համարժեք արդյունքներ ստանալու նպատակով:

2. Հանձնաժողովը կարող է պահանջել, որ անդամ պետությունները մշակեն և ներկայացնեն 1-ին պարբերությանը համապատասխան համարժեքության ապահովման վերաբերյալ հաշվետվություն:
3. Երկրորդ պարբերության մեջ նշված հաշվետվությանը դրական գնահատական տալու համար Հանձնաժողովը հիմնվում է համարժեքության ապահովման իր ուղեցույցների վրա (ենթակա է հրապարակման): Եթե անդամ պետությունները համարժեքությունն ապահովելու համար կիրառում են միջանկյալ գործոններ, համարժեքությունը հաստատվում և (կամ) փոփոխվում է Հանձնաժողովի ուղեցույցների հիման վրա:
4. Անդամ պետություններն ապահովում են, որ, հարկ եղած դեպքում, նախկին չափումների տվյալների նկատմամբ նույնպես հետին թվով կիրառվեն ճշգրտումներ՝ տվյալների համապատասխանության առավել բարձր մակարդակ ապահովելու համար:

Գ. Ստանդարտացում

Գազային աղտոտող նյութերի ծավալը պետք է ստանդարտացվի 293 կելվին ջերմաստիճանի և 101.3 կիլոպասկալ մթնոլորտային ճնշման ներքո: Պինդ մարմինների և դրանցում առկա՝ վերլուծության ենթակա նյութերի (օրինակ՝ կապար) համար նմուշառման ծավալները որոշվում են չափումների ամսաթվին՝ ջերմաստիճանով և մթնոլորտային ճնշմամբ պայմանավորված մթնոլորտային պայմաններով:

Դ. Նոր սարքավորումների ներմուծումը

Սույն Հրահանգի իրականացման համար գնված բոլոր նոր սարքավորումները մինչև 2010 թվականի հունիսի 11-ը պետք է համապատասխանեն ստանդարտ մեթոդին կամ դրա համարժեքին:

Ամրակայված դիտակայաններից կատարվող չափումների համար օգտագործվող բոլոր սարքավորումները պետք է համապատասխանեն ստանդարտ մեթոդին կամ դրա համարժեքին մինչև 2013 թվականի հունիսի 11-ը:

Ե. Տվյալների փոխադարձ ճանաչումը

Տիպային օրինակները հաստատելիս, որի նպատակը ցույց տալն է, որ տվյալ սարքավորումը բավարարում է Ա մասում նշված ստանդարտ մեթոդներով նախատեսված շահագործման պահանջները, 3-րդ հոդվածին համապատասխան նշանակված իրավասու իշխանություններն ու մարմինները պետք է ընդունեն այլ անդամ պետություններում նշված փորձարկումների իրականացման համար EN ISO 17025 ստանդարտով հավատարմագրված լաբորատորիաների կողմից տրված փորձարկումների վերաբերյալ հաշվետվությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ VII

ՕՁՈՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

A. Սահմանումներ և չափորոշիչներ

1. Սահմանումները

Մեկ միլիարդ կշռային միավորի մեջ 40 պարունակությունը գերազանցող՝ կուտակված օզոնի կոնցենտրացիա (արտահայտված ժամը (մկգ/մ³)-ով) նշանակում է որոշակի ժամկետում 80մկգ/մ³-ից ավելի և 80մկգ/մ³ ամենժամյա կոնցենտրացիաների միջև տարբերությունների գումարը՝ օգտագործելով յուրաքանչյուր օր եվրոպական կենտրոնական ժամանակով (ԵԿԺ) 8:00– 20:00–ն ընկած ժամանակահատվածում չափված ամենժամյա արժեքները:

2. Չափանիշներ

Տվյալներն ամփոփելիս և վիճակագրական ցուցանիշները հաշվարկելիս վավերությունը չափելու համար կիրառվում են հետևյալ չափորոշիչները.

Ցուցանիշ	Վավեր տվյալների անհրաժեշտ մասնաբաժինը
Մեկժամյա արժեքներ	75 % (այսինքն՝ 45 րոպե)
Ութժամյա արժեքներ	արժեքների 75 %-ը (այսինքն՝ վեց ժամ)
Օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութժամյա հատվածի միջինը հաշվարկված յուրաքանչյուր ժամից սկսած	ամեն ժամից սկսած ութժամյա հատվածի միջինի 75 %-ը (այսինքն՝ օրական 18 ութժամյա հատվածների միջինները)
Մեկ միլիարդ կշռային միավորի մեջ 40 պարունակությունը գերազանցող՝ կուտակված օզոնի կոնցենտրացիա	Մեկ միլիարդ կշռային միավորի մեջ 40 պարունակությունը գերազանցող՝ կուտակված օզոնի կոնցենտրացիայի արժեքը հաշվարկելու համար սահմանված ժամկետի ընթացքում մեկժամյա արժեքների 90 %-ը ²⁸

²⁸ Այն դեպքերում, երբ բոլոր հնարավոր չափված տվյալներն առկա չեն, մեկ միլիարդ կշռային միավորի մեջ 40 պարունակությունը գերազանցող՝ կուտակված օզոնի կոնցենտրացիայի արժեքների հաշվարկման համար օգտագործվում է հետևյալ գործակիցը.

հնարավոր բոլոր ժամերի գումար*

$$40440_{\text{կանխատեսված}} = 40440_{\text{չափված}} \times \frac{\text{-----}}{\text{(բաժանած)}}$$

յուրաքանչյուր ժամ չափված արժեքներ

(*) գումարը սահմանման ժամկետի բոլոր ժամերի թիվն է (այսինքն՝ ԵԿԺ-ով 8:00–20:00–ն ընկած միջակայքի ժամերը՝ բուսականության պահպանության համար յուրաքանչյուր տարվա մայիսի 1–ից հուլիսի 31–ը, իսկ անտառների պահպանության համար՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 1–ից սեպտեմբերի 30–ը):

Տարեկան միջինը	Մեկժամյա արժեքների 75 %-ը ամռան (ապրիլից սեպտեմբեր) և 75 %-ը ձմռան (հունվարից մարտ, հոկտեմբերից դեկտեմբեր) սեզոնների համար՝ առանձին վերցրած
Ամսական գերազանցումների և առավելագույն արժեքների թիվը	օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութժամյա հատվածի միջինի 90 %-ը (ամսական 27 օրվա օրական արժեքները) ԵԿԺ-ով 8:00– 20:00–ն ընկած ժամանակահատվածի մեկժամյա արժեքների 90 %-ը
Տարեկան գերազանցումների և առավելագույն արժեքների թիվը	ամռան սեզոնի վեց ամսից հինգը (ապրիլից սեպտեմբեր)

Բ. Նպատակային արժեքները

Նպատակ	Միջինացման ժամկետ	Նպատակային արժեք	Նպատակային արժեքի հետ համապատասխանության ապահովման ամսաթիվ ²⁹
Մարդու առողջության պաշտպանություն	Օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութժամյա հատվածի միջինը ³⁰	120 մկգ/մ ³ կոնցենտրացիան երեք տարվա ընթացքում օրացուցային տարվա կտրվածքով չպետք է գերազանցվի ավելի քան 25 օր ³¹	01.01.2010թ
Բուսականության պաշտպանություն	մայիսից հուլիս	մեկ միլիարդ կշռային միավորի մեջ 40 պարունակությունը գերազանցող՝ կուտակված օզոնի կոնցենտրացիան (հաշվարկված մեկժամյա արժեքների հիման վրա) 18000 մկգ/մ ³ ժամը՝ միջինացված հինգ տարվա կտրվածքով ³¹	01.01.2010թ.

²⁹ Նպատակային արժեքների հետ համապատասխանությունը գնահատվելու է այս օրվա դրությամբ: Այսինքն, 2010 թվականը կլինի հետագա երեք կամ հինգ տարիների ընթացքում համապատասխանությունը հաշվարկելու համար տվյալների օգտագործման առաջին տարին:

³⁰ Օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութժամյա հատվածի միջինն ընտրվում է յուրաքանչյուր ութժամյա հատվածի միջինն ուսումնասիրելով, որը հաշվարկվում է ամենժամյա տվյալների հիման վրա և թարմացվում յուրաքանչյուր ժամ: Յուրաքանչյուր ութժամյա հատվածի հաշվարկվող միջինը համարվում է այն օրվա համար հաշվարկված, երբ ավարտվում է տվյալ ութժամյա հատվածը, այսինքն՝ հաշվարկի առաջին հատվածը յուրաքանչյուր մեկ օրվա համար համարվում է նախորդ օրվա 17:00–ից մինչև տվյալ օրվա 01:00–ն ընկած ժամանակահատվածը. հաշվարկի վերջին հատվածը յուրաքանչյուր մեկ օրվա համար համարվում է տվյալ օրվա 16:00– 24:00–ն ընկած ժամանակահատվածը:

³¹ Եթե երեք կամ հինգ տարիների միջինը հնարավոր չէ որոշել իրար հաջորդող ամբողջական տարեկան տվյալների հիման վրա, նպատակային արժեքների հետ համապատասխանությունն ստուգելու համար անհրաժեշտ տարեկան նվազագույն տվյալներն են՝

- մարդու առողջության պաշտպանության նպատակով նպատակային արժեքի համար՝ մեկ տարվա վավեր տվյալներ,
- բուսականության պահպանության նպատակով նպատակային արժեքի համար՝ երեք տարվա վավեր տվյալներ:

Գ. Երկարաժամկետ նպատակային կոնցենտրացիաները

Նպատակ	Միջինացման ժամկետ	Երկարաժամկետ նպատակային սահման	Երկարաժամկետ նպատակային սահմանի հետ համապատասխանության ապահովման ամսաթիվ
Մարդու առողջության պաշտպանություն	Օրացուցային տարվա ընթացքում օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութամյա հատվածի միջինը	120 մկգ/մ ³	չի սահմանված
Բուսականության պահպանություն	Մայիսից հուլիս	Մեկ միլիարդ կշռային միավորի մեջ 40 պարունակությունը գերազանցող՝ կուտակված օզոնի կոնցենտրացիան (հաշվարկված մեկժամյա արժեքների հիման վրա) 6000 մկգ/մ ³ · ժամը	չի սահմանված

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

Օզոնի կոնցենտրացիաների գնահատման նպատակով նմուշառման դիտակետերի դասակարգման և տեղակայման չափորոշիչները

Հետևյալը կիրառվում է ամրակայված դիտակայաններից չափումների նկատմամբ.

Ա. Մեծամասշտաբ տեղակայումը

Դիտակայանի տեսակը	Չափումների նպատակները	Ներկայացուցչականությունը ³²	Մեծամասշտաբ տեղակայման չափորոշիչները
Քաղաքային	Մարդու առողջության պաշտպանություն. քաղաքային բնակչության վրա օզոնի վնասակար ներգործությունը գնահատելու համար, այսինքն՝ այնտեղ, որտեղ բնակչության խտությունը և օզոնի կոնցենտրացիան համեմատաբար բարձր են և ներկայացուցչական ընդհանուր բնակչության վրա վնասակար ներգործության առումով	Մի քանի քառակուսի կիլոմետր	Տեղի արտանետման աղբյուրներից, ինչպես, օրինակ՝ ավտոմեքենաներից, բենզալցակայաններից և այլ աղբյուրներից արտանետումների ներգործությունից հեռու վայրեր. օդափոխվող տարածքներ, որտեղ հնարավոր է չափել օդի հետ լավ խառնված արտանետումների մակարդակները. այնպիսի վայրեր, ինչպիսիք են քաղաքների բնակելի և առևտրային հատվածները, զբոսայգիները (ծառերից հեռու տարածքներում), քիչ երթևեկություն ունեցող կամ երթևեկության համար փակ պողոտաները կամ հրապարակները, կրթական, սպորտային կամ ժամանցային կառուցվածքներով բացօթյա տարածքներ
Մերձքաղաքային	Մարդու առողջության և բուսականության պահպանություն. ագլոմերացիաներին հարակից այն տարածքներում տեղակայված բնակչության և բուսականության վրա վնասակար ներգործությունը գնահատելու համար, որտեղ գրանցվում են բնակչության և բուսականության վրա օզոնի առավելագույն	Մի քանի տասնյակ քառակուսի կիլոմետր	Առավելագույն արտանետումների տարածքից որոշակի հեռավորության վրա տարածք, որը օզոնի կուտակումների համար բարենպաստ պայմանների ժամանակ գտնվում է հիմնական քամու ուղղության (քամիների ուղղությունների) վրա. վայրեր, որտեղ ագլոմերացիայի սահմանի

³² Նմուշառման դիտակետերը պետք է, հնարավորության դեպքում, արտացոլեն ոչ անմիջական հարևանությամբ գտնվող համանման վայրերի կոնցենտրացիաները:

	<p>կոնցենտրացիաների ուղղակի կամ անուղղակի վնասակար ներգործությունը</p>		<p>հարևանությամբ գտնվող բնակչությունը, խոցելի մշակաբույսերը կամ բնական էկոհամակարգերը ենթարկվում են օզոնի բարձր կոնցենտրացիաների վնասակար ներգործությանը. համապատասխան դեպքերում՝ որոշ մերձքաղաքային կայաններ, որոնք գտնվում են դեպի առավելագույն արտանետումների վայր փչող քամիների հակառակ ուղղության վրա՝ շրջանում օզոնի ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով</p>
<p>Գյուղական տարածքում տեղակայված</p>	<p>Մարդու առողջության և բուսականության պահպանություն. ագլոմերացիաներին հարակից այն տարածքներում տեղակայված բնակչության, բուսականության և բնական էկոհամակարգերի վրա ենթատարածաշրջանային մակարդակով օզոնի կոնցենտրացիաների վնասակար ներգործությունը գնահատելու համար</p>	<p>Ենթատարածաշրջանային կոնցենտրացիաները (մի քանի հարյուր քառակուսի կիլոմետր)</p>	<p>Կայանները կարող են տեղադրվել փոքր բնակավայրերում և (կամ) բնական էկոհամակարգեր, անտառներ կամ մշակաբույսեր ունեցող տարածքներում. դրանք պետք է ներկայացուցչական լինեն օզոնի կոնցենտրացիաների առումով՝ գտնվելով արտանետումների տեղական աղբյուրների, ինչպես, օրինակ՝ արտադրական տարածքների և ճանապարհների, անմիջական վնասակար ներգործության շրջանից հեռու. բաց տարածքներ, որոնք չեն գտնվում բարձր լեռների գագաթներին</p>
<p>Գյուղական տարածքի ֆոնային աղտոտվածության գնահատման համար նախատեսված տարածքում տեղակայված</p>	<p>Մարդու առողջության և բուսականության պահպանություն. մշակաբույսերի և բնական էկոհամակարգերի, ինչպես նաև բնակչության վրա տարածաշրջանային օզոնի կոնցենտրացիաների վնասակար ներգործությունը գնահատելու համար</p>	<p>Տարածաշրջանային, երկրի մակարդակով, կոնտինենտալ կոնցենտրացիաներ (1000–ից 10 000 քառակուսի կիլոմետր)</p>	<p>Նոսր խտությամբ բնակչություն ունեցող, օրինակ՝ բնական էկոհամակարգեր պարունակող, անտառածածկ, քաղաքային և արտադրական տարածքներից և արտանետման տեղական աղբյուրներից առնվազն 20կմ հեռավորության վրա գտնվող տարածքներում տեղակայված դիտակայաններ. պետք է խուսափել գետնամերձ ինվերսիայի պայմանների ձևավորմանը նպաստող տարածքներից և բարձր լեռնագագաթներից. խորհուրդ</p>

			չի տրվում կայանները տեղադրել տեղական քամիների օրական ցիկլեր ունեցող ափամերձ տարածքներում
--	--	--	--

Գյուղական և գյուղական տարածքի ֆոնային աղտոտվածության գնահատման համար նախատեսված տարածքները, հնարավորության դեպքում, համակարգվում են «Համայնքում անտառների և էկոլոգիական փոխազդեցությունների դիտանցման վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2152/2003 կանոնակարգի (ԵՀ) իրականացման մանրամասն կանոնները սահմանող՝ Հանձնաժողովի (ԵՀ) 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1737/2006 կանոնակարգով նախատեսված դիտանցման պահանջներին համապատասխան³³:

Բ. Փոքրամասշտաբ տեղակայումը

Այնքանով, որքանով հնարավոր է, կիրառվում է III հավելվածի Գ մասով նախատեսված փոքրամասշտաբ տեղակայման ընթացակարգը, ապահովելով նաև, որ նմուշառման զննածոը տեղակայված լինի այնպիսի աղբյուրներից բավարար հեռավորության վրա, ինչպիսիք վառարաններն ու դրանց ծխնելույզներն են, ինչպես նաև մոտակա ճանապարհից 10 մետրից ավելի հեռավորության վրա այնպես, որ հեռավորությունն ավելանա՝ ըստ երթևեկության ծանրաբեռնվածության ավելացման:

Գ. Վայրերի ընտրության փաստաթղթավորումն ու վերանայումը

Կիրառվում են III հավելվածի Դ մասում նշված ընթացակարգերը, համապատասխան վայրերում չափվող օզոնի կոնցենտրացիաների վրա ազդող օդերևութաբանական և լուսաքիմիական պրոցեսների համատեքստում իրականացնելով դիտանցման տվյալների պատշաճ ուսումնասիրություն ու մեկնաբանություն:

³³ ՊՏ, L 334, 25.11.2006թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ IX

Օգոնի կոնցենտրացիաների չափման համար ամրակայված նմուշառման դիտակետերի նվազագույն թիվը որոշելու չափորոշիչները

Ա. Նպատակային արժեքների, երկարաժամկետ նպատակային սահմանների և տեղեկացման ու զգուշացման շեմերի հետ համապատասխանությունը գնահատելու համար ամրակայված երկարաժամկետ նմուշառման դիտակետերի նվազագույն թիվը, երբ նշված չափումները տվյալների ձեռքբերման միակ աղբյուրն են

Բնակչություն (× 1000)	Ազլոմերացիաներ (քաղաքային և մերձքաղաքային) ³⁴	Այլ գոտիներ (մերձքաղաքային և գյուղական) ³⁴	Գյուղական տարածքի ֆոնային աղտոտվածության գնահատման համար նախատեսված տարածքներ
< 250		1	պետության բոլոր գոտիներում միջինը 1 դիտակայան՝ յուրաքանչյուր 50 000 քառակուսի կիլոմետրի վրա ³⁵
< 500	1	2	
< 1000	2	2	
< 1500	3	3	
< 2000	3	4	
< 2750	4	5	
< 3750	5	6	
> 3750	Յուրաքանչյուր 2 միլիոն բնակչի համար մեկ լրացուցիչ դիտակայան	Յուրաքանչյուր 2 միլիոն բնակչի համար մեկ լրացուցիչ դիտակայան	

Բ. Երկարաժամկետ նպատակային սահմանների հետ համապատասխանությունն ապահովող գոտիներում և ազլոմերացիաներում ամրակայված նմուշառման դիտակետերի նվազագույն թիվը

Օգոնի կոնցենտրացիաների չափման նմուշառման դիտակետերի թիվը, գնահատման այնպիսի օժանդակ միջոցների հետ համադրությամբ, ինչպիսին են օդի որակի

³⁴ Քաղաքամերձ տարածքների՝ բնակչության վրա հնարավոր առավելագույն ներգործության վայրերում առնվազն մեկ դիտակայան: Ազլոմերացիաներում դիտակայանների առնվազն 50 %-ը պետք է տեղակայված լինի քաղաքամերձ տարածքներում:

³⁵ Բարդ ռելիեֆով տարածքներում առաջարկվում է տեղակայել առնվազն մեկ դիտակայան՝ յուրաքանչյուր 25 000 քառակուսի կիլոմետր տարածքի վրա:

մոդելավորումը և ազոտի երկօքսիդի համատեղ չափումները, պետք է բավարար լինի՝ օզոնով աղտոտվածության միտումներն ուսումնասիրելու և երկարաժամկետ նպատակային սահմանների հետ համապատասխանությունն ստուգելու համար: Ազլոմերացիաներում և այլ գոտիներում տեղակայված կայանների թիվը կարող է կրճատվել մինչև Ա մասում նշված թվի մեկ երրորդը: Եթե ամրակայված դիտակայաններից կատարվող չափումները տեղեկության միակ աղբյուրն են, պետք է գործի առնվազն մեկ դիտանցման կայան: Եթե այն գոտիներում, որտեղ կատարվում են նաև լրացուցիչ գնահատումներ, դրա արդյունքում չի գործում որևէ դիտակայան, հարակից գոտիների մի շարք դիտակայանների հետ համակարգումն ապահովում է օզոնի կոնցենտրացիաների պատշաճ գնահատումը՝ երկարաժամկետ նպատակների մասով: Հեռավոր գյուղական տարածքներում 100 000 քառակուսի կիլոմետրի վրա վրա գործում է մեկ դիտակայան:

ՀԱՎԵԼՎԱԾ X

ՕՉՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ

Ա. Նպատակները

Նման չափումների հիմնական նպատակն է վերլուծել օզոնային շերտը քայքայող նյութերի կոնցենտրացիաներին առնչվող բոլոր միտումները, ստուգել արտանետումների կրճատման ռազմավարությունների արդյունավետությունը, արտանետումների կադաստրներում հետևողականորեն հավաքված տվյալները և օգնել հասկանալու, թե որ աղտոտման աղբյուրներն են պատասխանատու՝ դիտարկված աղտոտման կոնցենտրացիաների համար:

Նպատակներից մեկը նաև օզոնի ձևավորման և այն քայքայող նյութերի դիսպերսիայի գործընթացների մասին գիտելիքներն ընդլայնելը, ինչպես նաև լուսաքիմիական մոդելների կիրառումը խթանելն է :

Բ. Նյութերը

Օզոնային շերտը քայքայող նյութերի չափումները ներառում են առնվազն ազոտի օքսիդները (NO ու NO^2) և համապատասխան ցնդող օրգանական միացությունները (SOU): Չափման ենթակա ցնդող օրգանական միացությունների ցանկը տրվում է ստորև.

	1-Բուֆիլեն	Իզոպրեն	Էթիլային բենզին
Էթան	Տրանս-2-բուֆիլեն	n-Հեքսան	m + p-քսիլոլ
Էթիլեն	ցիս-2-Բուֆիլեն	i-Հեքսան	օ-Քսիլոլ
Ացետիլեն	1,3-Բուֆադիեն	n-Հեպտան	1,2,4- եռմեթիլբենզոլ
Պրոպան	n-Պենտան	n-Օկտան	1,2,3-եռմեթիլբենզոլ
Պրոպան	n-Պենտան	n-Օկտան	1,3,5-եռմեթիլբենզոլ (մեզիթիլեն)
n-Բութան	1-Ամիլեն	Բենզոլ	Ֆորմալդեհիդ
i-Բութան	2-Ամիլեն	Տոլուոլ	Ընդհանուր ածխաջրածիններ

Գ. Տեղակայումը

Չափումները պետք է կատարվեն հատկապես քաղաքային կամ քաղաքամերձ տարածքներում՝ սույն Հրահանգի պահանջներին համապատասխան հիմնադրված և Ա մասում նշված դիտանցման նպատակների առումով պատշաճ համարվող ցանկացած դիտանցման վայրում:

ՀԱՎԵԼՎԱԾ XI

ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ա. Չափորոշիչները

Չհակասելով I հավելվածին՝ տվյալներն ամփոփելիս և վիճակագրական ցուցանիշները հաշվարկելիս ճշտությունը չափելու համար կիրառվում են հետևյալ չափորոշիչները.

Ցուցանիշ	Վավեր տվյալների անհրաժեշտ մասնաբաժինը
Մեկժամյա արժեքներ	75 % (այսինքն՝ 45 րոպե)
Ութժամյա արժեքներ	արժեքների 75 %-ը (այսինքն՝ 6 ժամ)
Օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութժամյա հատվածի միջինը	Յուրաքանչյուր ժամից սկսած ութժամյա հատվածի միջինի 75 %-ը (այսինքն՝ օրական 18 ութժամյա հատվածների միջինները)
24-ժամյա արժեքները	ամենժամյա միջինների 75 %-ը (այսինքն՝ առնվազն 18 ժամվա արժեքները)
Տարեկան միջինը	Տարվա կտրվածքով մեկժամյա արժեքների կամ (բացակայության դեպքում) 24-ժամյա արժեքների 90 %-ը ³⁶

Բ. Սահմանային թույլատրելի նորմաները

Միջինի հաշվարկման ժամկետը	Սահմանային թույլատրելի նորմա	Թույլատրելի մարժա	Սահմանային թույլատրելի նորմայի հետ համապատասխանության ամսաթիվ
Ծծմբային անհիդրիդ			
Մեկ ժամ	350 մկգ/մ ³ , որը օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 24 անգամ	150 մկգ/մ ³ (43 %)	___ ³⁷
Մեկ օր	125 մկգ/մ ³ , որն օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 3 անգամ	Չկա	___ ³⁷

³⁶ Տարեկան միջինի հաշվարկման պահանջները չեն տարածվում կանոնավոր ստուգաճշտման կամ սարքավորումների սովորական սպասարկման արդյունքում տվյալների կորուստների վրա:

³⁷ Ուժի մեջ է 2005 թվականի հունվարի 1-ից:

Ազոտի երկօքսիդ			
Մեկ ժամ	200 մկգ/մ ³ , որը օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 18 անգամ	50 %՝ 1999 թվականի հուլիսի 19-ին, որը նվազում է 2001 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո յուրաքանչյուր 12 ամիսը մեկ՝ տարեկան հավասարաչափ տոկոսներով այնպես, որ 2010 թվականի հունվարի 1-ին հասնի 0 %-ի	1 հունվարի, 2010 թվական
Օրացուցային տարի	40 մկգ/մ ³	50 %՝ 1999 թվականի հուլիսի 19-ին, որը նվազում է 2001 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո յուրաքանչյուր 12 ամիսը մեկ՝ տարեկան հավասարաչափ տոկոսներով այնպես, որ 2010 թվականի հունվարի 1-ին հասնի 0 %-ի	1 հունվարի, 2010 թվական
Բենզոլ			
Օրացուցային տարի	5 մկգ/մ ³	5 մկգ/մ ³ (100%)՝ 2000 թվականի դեկտեմբերի 13-ին, որը նվազում է 2006 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո յուրաքանչյուր 12 ամիսը մեկ՝ 1 մկգ/մ ³ -ով այնպես, որ 2010 թվականի հունվարի 1-ին հասնի 0 %-ի	1 հունվարի, 2010 թվական
Շմոլ գազ			
Օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութամյա հատվածի միջինը ³⁸	10 մկգ/մ ³	60 %	___ ³⁷
Կապար			
Օրացուցային	0,5 մկգ/մ ³ ³⁹	100 %	___ ³⁸

³⁸ Օրական առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութամյա հատվածի միջինը կընտրվի ութամյա բոլոր հատվածների միջիններն ուսումնասիրելով. այն հաշվարկվում է ամենժամյա տվյալների հիման վրա և թարմացվում յուրաքանչյուր ժամ: Յուրաքանչյուր ութամյա հատվածի հաշվարկվող միջինը համարվում է այն օրվա համար հաշվարկված, երբ ավարտվում է տվյալ ութամյա հատվածը, այսինքն՝ հաշվարկի առաջին հատվածը յուրաքանչյուր մեկ օրվա համար համարվում է նախորդ օրվա 17:00-ից մինչև տվյալ օրվա 01:00-ն ընկած ժամանակահատվածը. հաշվարկի վերջին հատվածը յուրաքանչյուր մեկ օրվա համար համարվում է տվյալ օրվա 16:00-ից 24:00-ն ընկած ժամանակահատվածը:

³⁹ Ուժի մեջ է 2005 թվականի հունվարի 1-ից: Սահմանային թույլատրելի նորմա, որի հետ համապատասխանությունը պետք է ապահովվի միայն 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ այն արտադրական աղբյուրների անմիջական հարևանությամբ, որոնք տեղակայված են տասնամյակներ շարունակվող արտադրական գործողությունների արդյունքում աղտոտված վայրերում: Սահմանային արժեքը նման դեպքերում մինչև 2010 թվականի հունվարի 1-ը կլինի 1.0 մկգ/մ³: Այն տարածքը, որտեղ կարող են գրանցվել ավելի բարձր սահմանային թույլատրելի նորմաներ, չպետք է հատի նշված աղբյուրներից 1000մ շառավղով տարածքի սահմանագիծը:

տարի			
ՊՄ ₁₀			
Մեկ օր	50 մկգ/մ ³ , որը օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցվի ավելի քան 35 անգամ	50 %	___ ³⁷
Օրացուցային տարի	40 մկգ/մ ³	20 %	___ ³⁷

ՀԱՎԵԼՎԱԾ XII

ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՇԵՄԵՐԸ

Ա. Օգոնից բացի այլ աղտոտող նյութերի զգուշացման շեմերը

Չափվում են երեք ժամ անընդմեջ՝ այնպիսի վայրերում, որոնք ներկայացուցչական են առնվազն 100 քառակուսի կիլոմետր շրջակա տարածքի կամ ամբողջ գոտու կամ ագլոմերացիայի օդի որակի համար՝ կախված այն բանից, թե դրանցից որն է ավելի փոքր:

Աղտոտող նյութ	Զգուշացման շեմ
Ծծմբային անհիդրիդ	500 մկգ/մ ³
Ազոտի երկօքսիդ	400 մկգ/մ ³

Բ. Օգոնի մասով տեղեկացման և զգուշացման շեմեր

Նպատակ	Միջինի հաշվարկման ժամկետ	Շեմ
Տեղեկություն	1 ժամ	180 մկգ/մ ³
Զգուշացում	1 ժամ ⁴⁰	240 մկգ/մ ³

⁴⁰ 24-րդ հոդվածի իրականացման համար, շեմի գերազանցումը չափվում կամ կանխատեսվում է երեք անընդմեջ ժամերի ընթացքում:

ՀԱՎԵԼՎԱԾ XIII

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Միջինի հաշվարկման ժամկետը	Կրիտիկական սահմանը	Թույլատրելի մարժան
Ծծմբային անհիդրիդ		
Օրացուցային տարի և ձմեռ (հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը)	20 մկգ/մ ³	Չկա
Ազոտի օքսիդներ		
Օրացուցային տարի	30 մկգ/մ ³ NO _x	Չկա

ՀԱՎԵԼՎԱԾ XIV

ՊՄ_{2.5}-ի ՎՆԱՍԱԿԱՐ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԸ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՈՐՄԱՆ

Ա. Վնասակար ներգործության միջինացված ցուցանիշ

Վնասակար ներգործության միջինացված ցուցանիշը (ՎՆՄՑ), արտահայտված մկգ/մ³-ով, որոշվում է անդամ պետության տարածքի գոտիներում և ագլոմերացիաներում քաղաքային տարածքների ֆոնային աղտոտման դիտակայաններից կատարվող չափումների հիման վրա: Այն գնահատվում է V հավելվածի Բ մասին համապատասխան հիմնադրված բոլոր նմուշառման դիտակետերում՝ հաշվարկելով երեք օրացուցային տարիների ընթացքում ամենամյա միջին կոնցենտրացիաների միջինացված ցուցանիշների հիման վրա: 2010 բազային տարվա ՎՆՄՑ-ն 2008, 2009 և 2010 թթ. գրանցված կոնցենտրացիաների միջինն է:

Այդուհանդերձ, եթե 2008 թվականի համար տվյալներ չկան, անդամ պետությունները կարող են օգտագործել 2009 և 2010 թթ. կամ 2009, 2010 և 2011թթ. գրանցված կոնցենտրացիաների միջին ցուցանիշները: Այս տարբերակը կիրառող անդամ պետություններն իրենց համապատասխան որոշումների մասին տեղեկացնում են Հանձնաժողովին մինչև 2008 թվականի սեպտեմբերի 11-ը:

2020 թվականի ՎՆՄՑ-ն հաշվարկվում է բոլոր նմուշառման դիտակետերում հաշվարկելով երեք՝ 2018, 2019 և 2020 օրացուցային տարիների ընթացքում ամենամյա միջին կոնցենտրացիաների միջինացված ցուցանիշները: ՎՆՄՑ-ն օգտագործվում է վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակի հետ համապատասխանությունն ուսումնասիրելիս:

2015 թվականի ՎՆՄՑ-ն հաշվարկվում է բոլոր նմուշառման դիտակետերում հաշվարկելով երեք՝ 2013, 2014 և 2015 օրացուցային տարիների ընթացքում ամենամյա միջին կոնցենտրացիաների միջինացված ցուցանիշները: ՎՆՄՑ-ն օգտագործվում է վնասակար ներգործության կոնցենտրացիայի մասով պարտավորության կատարումը ուսումնասիրելիս:

Բ. Վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակ

2010 թվականին ՎՆՄՑ-ի համեմատ վնասակար ներգործության նվազեցման ազգային նպատակը		Վնասակար ներգործության նվազեցման նպատակի ապահովման տարին
Նախնական կոնցենտրացիաները, մկգ/մ ³	Նվազեցման նպատակը՝ տոկոսով	2020թ.
< 8,5 = 8,5	0 %	
> 8,5 — < 13	10 %	
= 13 — < 18	15 %	
= 18 — < 22	20 %	
≥ 22	Բոլոր համապատասխան միջոցների կիրառում՝ 18 մկգ/մ ³ -ին հասնելու համար	

Եթե բազային տարում ՎՆՄՑ-ն կազմում է 8,5 մկգ/մ³ կամ պակաս, վնասակար ներգործության նվազեցման նպատակը պետք է զրո լինի: Նվազեցման նպատակը պետք է զրո լինի նաև այն դեպքերում, երբ 2010–2020 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ցանկացած ժամանակ ՎՆՄՑ-ն կազմել է 8,5 մկգ/մ³ և պահպանվում է այդ մակարդակում կամ դրանից ցածր:

Գ. Վնասակար ներգործության կոնցենտրացիայի մասով պարտավորությունը

Վնասակար ներգործության կոնցենտրացիայի մասով պարտավորություն	Պարտավորության արժեքի հետ համապատասխանության ապահովման տարի
20 մկգ/մ ³	2015թ.

Դ. Նպատակային արժեքը

Միջինի հաշվարկման ժամկետ	Նպատակային արժեք	Նպատակային արժեքի հետ համապատասխանության ապահովման ամսաթիվ
Օրացուցային տարի	25 մկգ/մ ³	1 հունվարի, 2010 թվական

Ե. Սահմանային թույլատրելի նորման

Միջինի հաշվարկման ժամկետ	Սահմանային թույլատրելի նորմա	Թույլատրելի մարժա	Սահմանային թույլատրելի նորմայի հետ համապատասխանության ապահովման ամսաթիվ
ՓՈՒԼ 1			
Օրացուցային տարի	25 մկգ/մ ³	20 %՝ 2008 թվականի հունիսի 11-ին, որը նվազում է դրան հաջորդող տարվա հունվարի 1-ին և դրանից հետո յուրաքանչյուր 12 ամիսը մեկ՝ տարեկան հավասարաչափ տոկոսներով այնպես, որ 2015 թվականի հունվարի 1-ին հասնի 0 %-ի	1 հունվարի, 2015 թվական
ՓՈՒԼ 2 ⁴¹			
Օրացուցային տարի	20 մկգ/մ ³		1 հունվարի, 2020 թվական

⁴¹ Փուլ 2. ինդիկատիվ սահմանային թույլատրելի նորման վերանայվելու է Հանձնաժողովի կողմից 2013 թվականին՝ առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցության, տեխնիկական նպատակահարմարության և անդամ պետություններում սահմանային թույլատրելի նորմաների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ XV

Մթնոլորտային օդի որակի բարելավման նպատակով օդի որակի պահպանության տեղական, տարածաշրջանային կամ ազգային ծրագրերում ներառվող տեղեկությունները

Ա. 23-րդ հոդվածի հիման վրա տրամադրվող տեղեկությունները (օդի որակի պահպանության ծրագրեր)

1. Չափից ավելի աղտոտվածության տարածքի որոշումը

ա) տարածաշրջան.

բ) քաղաք (քարտեզ).

գ) դիտակայան (քարտեզ, աշխարհագրական կոորդինատներ):

2. Ընդհանուր տեղեկություններ

ա) գոտու տեսակը (քաղաք, արդյունաբերական կամ գյուղական տարածք).

բ) աղտոտված տարածության չափերը (քառակուսի կիլոմետր) և աղտոտման վնասակար ներգործությանը ենթարկվող բնակչությունը.

գ) կլիմայի վերաբերյալ օգտակար տվյալներ.

դ) տեղագրության մասին համապատասխան տվյալներ.

ե) գոտում պաշտպանության կարիք ունեցող օբյեկտների տեսակների վերաբերյալ համապարփակ տեղեկություններ:

3. Պատասխանատու մարմինները

Բարելավման ծրագրերի մշակման և իրականացման համար պատասխանատու անձանց անուններն ու հասցեները:

4. Աղտոտման բնույթը և գնահատումը

ա) նախորդ տարիներին դիտարկված կոնցենտրացիաները (նախքան բարելավման միջոցառումների իրականացումը).

բ) ծրագրի մեկնարկից ի վեր չափված կոնցենտրացիաները.

գ) գնահատման համար կիրառվող մեթոդները:

5. Աղտոտման աղբյուրները

ա) աղտոտման համար պատասխանատու հիմնական արտանետման աղբյուրների ցանկը (քարտեզ).

բ) այդ աղբյուրներից արտանետվող նյութերի ընդհանուր ծավալը (տարեկան տոննա).

գ) այլ շրջաններից տեղափոխված աղտոտող նյութերի մասին տվյալներ:

6. Իրավիճակի վերլուծություն

ա) սահմանային կոնցենտրացիաների գերազանցման համար պատասխանատու գործոնների վերաբերյալ մանրամասներ (օրինակ՝ տրանսպորտային միջոցներ, այդ թվում՝ միջսահմանային տրանսպորտ, մթնոլորտում երկրորդային աղտոտող նյութերի ձևավորում).

բ) օդի որակի բարելավման հնարավոր միջոցառումների վերաբերյալ մանրամասներ:

7. Այն բարելավման միջոցների կամ ծրագրերի վերաբերյալ մանրամասներ, որոնք առկա էին նախքան 2008 թվականի հունիսի 11-ը, ինչպիսիք են՝

ա) տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային մակարդակով միջոցառումները.

բ) այդ միջոցառումների տեսանելի ազդեցությունները:

8. Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո աղտոտման նվազեցման նպատակով ձեռնարկված միջոցառումների կամ ծրագրերի վերաբերյալ մանրամասներ.

ա) ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումների ցանկն ու նկարագրությունը,

բ) իրականացման ժամանակացույցը,

գ) օդի որակի ծրագրված բարելավումների և այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ժամկետի գնահատականը,

9. Երկարաժամկետ կտրվածքով ծրագրված կամ ուսումնասիրվող միջոցառումների կամ ծրագրերի վերաբերյալ մանրամասները:

10. Սույն Հավելվածով պահանջվող տեղեկություններին լրացնող հրապարակումների, փաստաթղթերի, աշխատանքների ցանկը:

Բ. Տեղեկություններ, որոնք պետք է տրամադրվեն 22(1) հոդվածի համաձայն

1. Ա մասով սահմանված ամբողջ տեղեկատվությունը:
2. Հետևյալ Հրահանգների իրականացման կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ.
 1. «Ավտոմեքենաների արտանետումներից օդի աղտոտման դեմ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Խորհրդի 1970 թվականի մարտի 20–ի 70/220/ԵՏՀ հրահանգ⁴².
 2. «Բենզինի պահման և բեռնափոխման կայաններից լցակայաններ դրա մատակարարման արդյունքում առաջացող՝ ցնդող օրգանական միացությունների (ՑՕՍ) արտանետումների նկատմամբ վերահսկողության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20–ի 94/63/ԵՀ հրահանգ⁴³.
 3. «Աղտոտման համատեղ կանխման ու վերահսկման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15–ի թիվ 2008/1/ԵՀ հրահանգ⁴⁴.
 4. «Ոչ տրանսպորտային շարժական մեքենաների վրա տեղադրվելիք ներքին այրման շարժիչներից գազային և աերոզոլային աղտոտիչների արտանետումների դեմ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 16–ի 97/68/ԵՀ հրահանգ⁴⁵.

⁴² ՊՏ, L 76, 06.04.1970թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 2006/19/ԵՀ հրահանգով (ՊՏ, L 363, 20.12.2006թ., էջ 81) փոփոխված Հրահանգ:

⁴³ ՊՏ, L 365, 31.12.1994թ., էջ 24: Վերջին անգամ թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) (ՊՏ, L 284, 31.10.2003թ., էջ 1) փոփոխված Հրահանգ:

⁴⁴ ՊՏ, L 24, 29.01.2008թ., էջ 8:

⁴⁵ ՊՏ, L 59, 27.02.1998թ., էջ 1: Թիվ 2006/105/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված Հրահանգ:

5. «Բենզինի և դիզելային վառելիքի որակի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 13–ի 98/70/ԵՀ հրահանգ⁴⁶.
6. «Որոշակի գործունեության մեջ և ձեռնարկություններում օրգանական լուծիչների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումները սահմանափակելու մասին» Խորհրդի 1999 թվականի մարտի 11–ի 1999/13/ԵՀ հրահանգը⁴⁷.
7. «Որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման վերաբերյալ» Խորհրդի 1999 թվականի 1999/32/ԵՀ ապրիլի 26–ի հրահանգ⁴⁸.
8. «Թափոնների այրման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 4–ի թիվ 2000/76/ԵՀ հրահանգ⁴⁹.
9. «Այրման խոշոր կայաններից որոշ աղտոտող նյութերի՝ մթնոլորտ արտանետումների նվազեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23–ի 2001/80/ԵՀ հրահանգ.
10. «Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի արտանետումների ազգային թույլատրելի սահմանաչափերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23–ի 2001/81/ԵՀ հրահանգ.
11. «Որոշակի ներկերի, լաքերի և փոխադրամիջոցների երեսմշակման արտադրանքի մեջ օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումները սահմանափակելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21–ի 2004/42/ԵՀ հրահանգ⁵⁰.

⁴⁶ ՊՏ, L 350, 28.12.1998թ., էջ 58: Վերջին անգամ թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված Հրահանգ:

⁴⁷ ՊՏ, L 85, 29.03.1999թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2004/42/ԵՀ հրահանգով (ՊՏ, L 143, 30.04.2004թ., էջ 87) փոփոխված Հրահանգ:

⁴⁸ ՊՏ, L 121, 11.05.1999թ., էջ 13: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2005/33/ԵՀ հրահանգով (ՊՏ, L 191, 22.07.2005թ., էջ 59) փոփոխված Հրահանգ:

⁴⁹ ՊՏ, L 332, 28.12.2005թ., էջ 91:

⁵⁰ ՊՏ, L 143, 30.04.2004թ., էջ 87:

12. Նավային վառելիքներում ծծմբի պարունակության վերաբերյալ 1999/32/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6–ի 2005/33/ԵՀ հրահանգ⁵¹.

13. «Ավտոմեքենաների օգտագործման համար սեղմումային բոցավառմամբ աշխատող շարժիչներից (դիզելային շարժիչ) գազային և աէորոզոլային աղտոտող նյութերի, ինչպես նաև ավտոմեքենաների օգտագործման համար բնական գազով կամ հեղուկ նավթային գազով գործող՝ կայծով բռնկվող շարժիչներից գազային աղտոտող նյութերի արտանետումների դեմ ձեռնարկվելիք միջոցառումներին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 28–ի 2005/55/ԵՀ հրահանգ⁵².

14. «Էներգիայի վերջնական սպառման արդյունավետության և էներգակիրների մատակարարման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5–ի 2006/32/ԵՀ հրահանգ⁵³.

3. Տեղական, տարածաշրջանային կամ ազգային մակարդակով օդի աղտոտումը նվազեցնող բոլոր միջոցառումների մասին տեղեկություններ, որոնք քննարկվել են օդի որակի նպատակներին հասնելու համար՝ ներառյալ

ա) անշարժ աղբյուրներից արտանետումների կրճատում, ապահովելով, որ օդն աղտոտող՝ փոքր և միջին չափի այրման անշարժ աղբյուրները (ներառյալ կենսազանգվածը) ունենան արտանետումների մաքրման սարքավորումներ կամ ձեռք բերեն այդպիսիք.

բ) ավտոմեքենաներից արտանետումների նվազեցում՝ դրանցում արտանետումների մաքրման սարքավորումներ տեղադրելու միջոցով: Այդ գործընթացն արագացնելու նպատակով կարելի է նախատեսել տնտեսական խթանների կիրառում.

գ) բնապահպանական պահանջներին համապատասխան պետական գնումների ձեռնարկի համաձայն՝ արտանետումները նվազեցնելու նպատակով պետական

⁵¹ ՊՏ, L 191, 22.07.2005թ., էջ 59:

⁵² ՊՏ, L 275, 21.10.2005թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 715/2007 կանոնակարգով (ԵՀ) (ՊՏ, L 171, 29.06.2007թ., էջ 1) փոփոխված Հրահանգ:

⁵³ ՊՏ, L 114, 27.04.2006թ., էջ 64:

իշխանությունների կողմից ճանապարհային մեքենաների, վառելիքի և այրման սարքավորումների գնումներ, այդ թվում՝

- նոր ավտոմեքենաներ՝ ներառյալ արտանետումների ցածր մակարդակով մեքենաներ,
- էկոլոգիապես ավելի մաքուր ավտոմեքենաներով տրամադրվող տրանսպորտային ծառայություններ,
- արտանետումների ցածր մակարդակով այրման անշարժ աղբյուրներ,
- այրման անշարժ և շարժական աղբյուրների համար արտանետումների ցածր մակարդակով վառելիք.

դ) երթևեկության ծրագրման և կառավարման միջոցով տրանսպորտային միջոցներից արտանետումների կրճատման միջոցառումներ (ներառյալ գերբեռնվածության դիմաց վճարումների, տարբերակված կայանման վճարների կամ այլ տնտեսական խթանների կիրառում. արտանետումների ցածր մակարդակով գոտիների սահմանում).

ե) միջոցներ, որոնք խրախուսում են տրանսպորտային միջոցներին անցնել էկոլոգիապես առավել մաքուր տեխնոլոգիաների կիրառմանը.

զ) փոքր, միջին և խոշոր անշարժ ու շարժական աղբյուրներում էկոլոգիապես առավել մաքուր վառելիքի օգտագործման ապահովում.

է) 2008/1/ԵՀ հրահանգով նախատեսված թույլտվությունների համակարգի, 2001/80/ԵՀ հրահանգով նախատեսված ազգային ծրագրերի և հարկերի, տուրքերի կամ արտանետումների առևտրի նման տնտեսական գործիքների կիրառմամբ օդի աղտոտվածության նվազեցման միջոցառումներ.

ը) անհրաժեշտության դեպքում, երեխաների կամ այլ խոցելի խմբերի առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ XVI

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հանրությանը պարբերաբար թարմ տեղեկություններ տրամադրվեն սույն Հրահանգով նախատեսված աղտոտող նյութերի՝ մթնոլորտում առկա կոնցենտրացիաների վերաբերյալ:
2. Մթնոլորտում աղտոտող նյութերի կոնցենտրացիաների մասին տեղեկությունները պետք է ներկայացնեն միջինացված արժեքներն ըստ VII և XI–XIV հավելվածներով սահմանված կոնցենտրացիաների միջինի հաշվարկման ժամկետի: Տեղեկությունների մեջ պետք է նշվի կարգավորվող աղտոտող նյութի մասով օդի որակի նպատակները գերազանցող ցանկացած մակարդակ, այդ թվում՝ սահմանային թույլատրելի նորմաները, նպատակային արժեքները, զգուշացման, տեղեկացման շեմերը կամ երկարաժամկետ նպատակները: Տեղեկությունները ներառում են նաև օդի որակի նպատակների մասով ամփոփ գնահատականը և առողջության կամ, հարկ եղած դեպքում, բուսականության վրա վնասակար ներգործության վերաբերյալ համապատասխան տվյալները:
3. Մթնոլորտում ծծմբային անհիդրիդի, ազոտի երկօքսիդի, պինդ մարմինների (առնվազն ՊՄ₁₀-ի), օզոնի և շմոլ գազի մթնոլորտային կոնցենտրացիաների վերաբերյալ տեղեկությունները պետք է թարմացվեն առնվազն օրական կտրվածքով, իսկ, հնարավորության դեպքում, այն պետք է թարմացվի յուրաքանչյուր ժամ: Կապարի և բենզոլի կոնցենտրացիաների մասին տեղեկությունները, որոնք ներկայացվում են առնվազն 12 ամսվա միջինացված արժեքի տեսքով, պետք է թարմացվեն եռամսյակը մեկ կամ, հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ամիս:
4. Անդամ պետություններն ապահովում են, որ զգուշացման շեմերի, ինչպես նաև որևէ տեղեկացման շեմի փաստացի կամ կանխատեսված գերազանցումների վերաբերյալ տեղեկությունները ժամանակին տրամադրվեն հանրությանը: Տրամադրվող տեղեկություններն առնվազն ներառում են հետևյալը.

ա) դիտարկված գերազանցման (գերազանցումների) վերաբերյալ տվյալներ՝

- գերազանցման գրանցման վայրը կամ տարածքը,

- գերազանցված շեմի տեսակը (տեղեկացման կամ զգուշացման),
- գերազանցման սկիզբը և տևողությունը,
- առավելագույն մեկժամյա կոնցենտրացիան, իսկ օզոնի դեպքում նաև՝ առավելագույն կոնցենտրացիայի գրանցման ութժամյա հատվածի միջինը.

բ) հաջորդ ցերեկվա/օրվա (օրերի) կանխատեսումները՝

- տեղեկացման և (կամ) զգուշացման շեմերի կանխատեսվող գերազանցման աշխարհագրական տարածքը,
- աղտոտման մակարդակի կանխատեսվող փոփոխությունները (բարելավում, կայունացում կամ վատթարացում), ինչպես նաև դրա պատճառները.

գ) ներգործության ենթարկվող բնակչության, առողջության վրա հնարավոր ազդեցության և ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ տեղեկություններ՝

- բնակչության ռիսկային խմբերի մասին տեղեկություններ,
- հնարավոր ախտանշանների նկարագրություն,
- ներգործության ենթարկվող բնակչության կողմից ձեռնարկվելիք նախազգուշական քայլերի վերաբերյալ առաջարկություններ,
- լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերման աղբյուրի մասին տեղեկություններ.

դ) աղտոտման կամ դրա ներգործության նվազեցման մասին կանխարգելիչ գործողությունների մասին տեղեկություններ. աղբյուրների հիմնական կենտրոնացման տարածքների մասին նշում. արտանետումները կրճատելուն ուղղված գործողությունների վերաբերյալ առաջարկություններ.

ե) կանխատեսված գերազանցումների դեպքում անդամ պետությունները քայլեր են ձեռնարկում՝ ապահովելու, որ, հնարավորության սահմաններում, տրամադրվեն նշված բոլոր մանրամասն տեղեկությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ XVII

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Սույն Հրահանգ	96/62/ԵՀ հրահանգ	1999/30/ԵՀ հրահանգ	2000/69/ԵՀ հրահանգ	2002/3/ԵՀ հրահանգ
Հոդված 1	Հոդված 1	Հոդված 1	Հոդված 1	Հոդված 1
2(1)–(5) հոդված	2(1)–(5) հոդված	—	—	—
Հոդված 2(6) և (7)	—	—	—	—
Հոդված 2(8)	Հոդված 2(8)	Հոդված 2(7)	—	—
Հոդված 2(9)	Հոդված 2(6)	—	—	Հոդված 2(9)
Հոդված 2(10)	Հոդված 2(7)	Հոդված 2(6)	—	Հոդված 2(11)
Հոդված 2(11)	—	—	—	Հոդված 2(12)
Հոդված 2(12) և (13)	—	Հոդված 2(13) և (14)	Հոդված 2(ա) և (բ)	—
Հոդված 2(14)	—	—	—	Հոդված 2(10)
Հոդված 2(15) և (16)	Հոդված 2(9) և (10)	Հոդված 2(8) և (9)	—	Հոդված 2(7) և (8)
Հոդված 2(17) և (18)	—	Հոդված 2(11) և (12)	—	—
Հոդված 2(19), (20), (21), (22) և (23)	—	—	—	—
Հոդված 2(24)	—	Հոդված 2(10)	—	—
Հոդված 2(25) և (26)	Հոդված 6(5)	—	—	—
Հոդված 2(27)	—	—	—	Հոդված 2(13)
Հոդված 2(28)	—	—	—	Հոդված 2(3)
Հոդված 3, բացառությամբ (1)(գ) պարբերությա ն	Հոդված 3	—	—	—
Հոդված 3(1)(գ)	—	—	—	—
Հոդված 4	Հոդված 2(9) և (10), Հոդված 6(1)	—	—	—
Հոդված 5	—	Հոդված 7(1)	Հոդված 5(1)	—
Հոդված 6(1)– (4)	Հոդված 6(1)–(4)	—	—	—
Հոդված 6(5)	—	—	—	—

Հոդված 7	—	Հոդված 7(2) և (3)՝ փոփոխություններով	Հոդված 5(2) և (3)՝ փոփոխություններով	—
Հոդված 8	—	Հոդված 7(5)	Հոդված 5(5)	—
Հոդված 9	—	—	—	Հոդված 9(1)–ի առաջին և երկրորդ ենթապարբերություններ
Հոդված 10	—	—	—	Հոդված 9(1)–(3)՝ փոփոխություններով
Հոդված 11(1)	—	—	—	Հոդված 9(4)
Հոդված 11(2)	—	—	—	—
Հոդված 12	Հոդված 9	—	—	—
Հոդված 13(1)	—	Հոդվածներ 3(1), 4(1), 5(1) և 6	Հոդվածներ 3(1) և 4	—
Հոդված 13(2)	—	Հոդվածներ 3(2) և 4(2)	—	—
Հոդված 13(3)	—	Հոդված 5(5)	—	—
Հոդված 14	—	Հոդվածներ 3(1) և 4(1)՝ փոփոխություններով	—	—
Հոդված 15	—	—	—	—
Հոդված 16	—	—	—	—
Հոդված 17(1)	—	—	—	Հոդվածներ 3(1) և 4(1)
Հոդված 17(2)	—	—	—	Հոդված 3(2) և (3)
Հոդված 17(3)	—	—	—	Հոդված 4(2)
Հոդված 18	—	—	—	Հոդված 5
Հոդված 19	Հոդված 10՝ փոփոխություններով	Հոդված 8(3)	—	Հոդված 6՝ փոփոխություններով
Հոդված 20	—	Հոդվածներ 3(4) և 5(4)՝ փոփոխություններով	—	—
Հոդված 21	—	—	—	—
Հոդված 22	—	—	—	—
Հոդված 23	Հոդված 8(1)–(4)՝ փոփոխություններով	—	—	—
Հոդված 24	Հոդված 7(3)՝ փոփոխություններով	—	—	Հոդված 7՝ փոփոխություններով
Հոդված 25	Հոդված 8(5)՝ փոփոխություններով	—	—	Հոդված 8՝ փոփոխություններով

Հողված 26	—	Հողված 8՝ փոփոխություններով	Հողված 7՝ փոփոխություններով	Հողված 6՝ փոփոխություններով
Հողված 27	Հողված 11՝ փոփոխություններով	Հողված 5(2)-ի երկրորդ ենթապարբերություն	—	Հողված 10՝ փոփոխություններով
Հողված 28(1)	Հողված 12(1)՝ փոփոխություններով	—	—	—
Հողված 28(2)	Հողված 11՝ փոփոխություններով	—	—	—
Հողված 28(3)	—	—	—	—
Հողված 28(4)	—	Հավելված IX՝ փոփոխություններով	—	—
Հողված 29	Հողված 12(2)	—	—	—
Հողված 30	—	Հողված 11	Հողված 9	Հողված 14
Հողված 31	—	—	—	—
Հողված 32	—	—	—	—
Հողված 33	Հողված 13	Հողված 12	Հողված 10	Հողված 15
Հողված 34	Հողված 14	Հողված 13	Հողված 11	Հողված 17
Հողված 35	Հողված 15	Հողված 14	Հողված 12	Հողված 18
Հավելված I	—	Հավելված VIII՝ փոփոխություններով	Հավելված VI	Հավելված VII
Հավելված II	—	Հավելված V՝ փոփոխություններով	Հավելված III	—
Հավելված III	—	Հավելված VI	Հավելված IV	—
Հավելված IV	—	—	—	—
Հավելված V	—	Հավելված VII՝ փոփոխություններով	Հավելված V	—
Հավելված VI	—	Հավելված IX՝ փոփոխություններով	Հավելված VII	Հավելված VIII
Հավելված VII	—	—	—	Հավելված I, Հավելված III, մաս II
Հավելված VIII	—	—	—	Հավելված IV
Հավելված IX	—	—	—	Հավելված V
Հավելված X	—	—	—	Հավելված VI
Հավելված XI	—	Հավելված I, մաս I, Հավելված II, մաս I և Հավելված III (փոփոխություններով); Հավելված IV (անփոփոխ)	Հավելված I, Հավելված II	—

Հավելված XII	—	Հավելված I, մաս II, Հավելված II, մաս II,	—	Հավելված II, մաս I
Հավելված XIII	—	Հավելված I, մաս I, Հավելված II, մաս I	—	—
Հավելված XIV	—	—	—	—
Հավելված XV, մաս Ա	Հավելված IV	—	—	—
Հավելված XV, մաս Բ	—	—	—	—
Հավելված XVI	—	Հոդված 8	Հոդված 7	Հոդված 6՝ փոփոխություններով

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովը հաշվի է առնում Խորհրդի և Եվրոպական պառլամենտի կողմից ընդունված՝ «Մթնոլորտային օդի որակի և Եվրոպայում առավել մաքուր օդի մասին» հրահանգի տեքստը: Մասնավորապես, Հանձնաժողովը հաշվի է առնում այն կարևորությունը, որը Եվրոպական պառլամենտը և անդամ պետությունները 22(4) հոդվածում և 16-րդ հղման մեջ տվել են աղտոտման աղբյուրների տեղակայման վայրում օդն աղտոտող նյութերի կրճատմանը:

Հանձնաժողովն ընդունում է, որ Շրջակա միջավայրի վերաբերյալ գործողությունների 6-րդ ծրագրով սահմանված նպատակների մասով առաջընթաց գրանցելու համար անհրաժեշտ է կրճատել օդն աղտոտող վնասակար նյութերի արտանետումները: Օդի աղտոտման մասին Հանձնաժողովի հաղորդագրությունը սահմանում է Համայնքի մակարդակով իրականացվող հնարավոր մի շարք միջոցներ: Ռազմավարության ընդունումից ի վեր այս և այլ միջոցների մասով էական առաջընթաց է արձանագրվել.

- Խորհուրդը և Պառլամենտն արդեն իսկ ընդունել են թեթև մարդատար ավտոմեքենաներից (մինչև 3500կգ) դեպի մթնոլորտ արտանետումները սահմանափակելու վերաբերյալ նոր օրենսդրություն,
- Հանձնաժողովն ընդունել է նոր օրենսդրական առաջարկը՝ Համայնքի արդյունաբերական արտանետումների վերաբերյալ օրենսդրության, այդ թվում՝ ինտենսիվ գյուղատնտեսական տարածքների և փոքրամասշտաբ արդյունաբերական այրման աղբյուրներից արտանետումներին առնչվող խնդիրները լուծելուն ուղղված միջոցների արդյունավետությունը խթանելու նպատակով,
- Հանձնաժողովն ընդունել է նոր օրենսդրական առաջարկ, որով սահմանափակել է ծանրաքարշ ավտոմեքենաներում տեղադրված շարժիչներից դեպի մթնոլորտ արտանետումները,
- 2008 թվականին Հանձնաժողովը նախատեսում է նոր օրենսդրական առաջարկներ, որոնք՝

- էլ ավելի են կրճատում անդամ պետությունների՝ հիմնական աղտոտող նյութերի արտանետումների ազգային թույլատրելի մակարդակը,
- կնվազեցնեն բենզալցակայաններում բենզինի շարժիչով աշխատող մեքենաները լիցքավորելու գործընթացի հետ կապված արտանետումները,
- հասցեագրում են վառելիքներում, այդ թվում՝ նավային վառելիքներում ծծմբի պարունակության վերաբերյալ հարցերը,
- նաև նախապատրաստական աշխատանքներ են տարվում՝ ուսումնասիրելու հետևյալի արդյունավետությունը՝
 - տնային ջեռուցման կաթսաների ու ջրատաքացուցիչների էկոլոգիապես մաքուր նախագծման բարելավում և դրանցից արտանետումների կրճատում,
 - ներկերի, լաքերի և փոխադրամիջոցների երեսմշակման արտադրանքի մեջ լուծիչների պարունակության կրճատում,
 - ոչ տրանսպորտային շարժական մեքենաներից դեպի մթնոլորտ արտանետումների կրճատում՝ այդպիսով առավելագույնի հասցնելով Հանձնաժողովի կողմից առաջարկված՝ ծծմբի ցածր պարունակություն ունեցող ոչ ավտոմոբիլային վառելիքների արդյունավետությունը,
- Հանձնաժողովը շարունակում է նաև Միջազգային ծովային կազմակերպության (ՄԾԿ) նավերից արտանետումներն էապես կրճատելուն ուղղված միջոցներ ձեռնարկել և մտադիր է առաջարկել Համայնքի մակարդակով միջոցներ ձեռնարկել, եթե ՄԾԿ-ն 2008 թվականի դրությամբ չներկայացնի այնպիսի հավակնոտ առաջարկներ, ինչպիսիք սպասվում են:

Այդուհանդերձ, Հանձնաժողովը մտադրված է պահպանել Առավել արդյունավետ կարգավորման նախաձեռնության նպատակները և անհրաժեշտ է համարում, որ առաջարկները հիմնվեն վնասների և օգուտների համապարփակ գնահատման վրա: Այս առումով և հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, Հանձնաժողովը կշարունակի գնահատել նոր օրենսդրական առաջարկներ կատարելու անհրաժեշտությունը, սակայն իրեն իրավունք է վերապահում որոշել նման առաջարկ ներկայացնելու անհրաժեշտությունը և ժամանակը:

ՆԻՂԵՂԱՆՂՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նիղեղանդների Թագավորությունը մշտապես աջակցել է օդի որակին առնչվող հավակնոտ և արդյունավետ եվրոպական քաղաքականության մշակմանը և շարունակելու է հավատարիմ մնալ իր այս դիրքորոշմանը: Հետևաբար, Նիղեղանդների Թագավորությունն իր գոհունակությունն է հայտնում, որ Խորհուրդն ու Եվրոպական պառլամենտը փոխհամաձայնության են եկել և շնորհավորում է Պառլամենտին, Հանձնաժողովին և Նախագահությանը՝ ձեռք բերված արդյունքների համար: Մթնոլորտային օդի որակի մասին նոր Հրահանգը էական առաջընթաց է արձանագրում շրջակա միջավայրի և հանրության առողջության մասով:

Ինչպես Նիղեղանդների Թագավորությունը նշել էր Ընդհանուր դիրքորոշումն ընդունելիս, երկրում օդի որակը մեծապես կախված է անդրսահմանային զարգացումներից, ուստի այն մեծապես կբարելավվի եվրոպական ընդհանուր արդյունավետ մոտեցումների արդյունքում: Նիղեղանդների Թագավորության հիմնական մտահոգությունն այն էր, որ Հրահանգը եվրոպական և ազգային միջոցների հավասարակշռված փաթեթ պարունակի, ինչպես նաև նախատեսի օդի որակի նպատակներին հասնելու իրատեսական ժամկետներ: Միայն այդ դեպքում անդամ պետությունները կկարողանան հասնել սահմանված հավակնոտ նպատակներին:

Նիղեղանդների Թագավորությունն իր գոհունակությունն է հայտնում Հանձնաժողովի այն հայտարարության վերաբերյալ, որով ասվում է, որ Հանձնաժողովը Համայնքի մակարդակով միջոցները կներկայացնի պատշաճ ժամկետում: Ժամանակային առումով, օդի որակի չափանիշների հետ համապատասխանությունը ԵՄ-ի մասշտաբով կախված կլինի աղբյուրների տեղակայման վայրում աղտոտման խնդիրները լուծելուն ուղղված արդյունավետ եվրոպական քաղաքականությունից: Նիղեղանդների Թագավորությունը ցանկանում է մասնավորապես նշել պինդ մարմինների (ՊՄ_{2.5}) մասով տվյալների բացակայությունը և դրանց արտանետումների ու կոնցենտրացիաների վերաբերյալ առկա անորոշ տեղեկությունները: Նիղեղանդների Թագավորությունն իհարկե կգործադրի բոլոր հնարավոր միջոցները՝ Հրահանգի նպատակներին մինչև նախատեսված ժամկետը հասնելու համար: Ներկայումս մեր տրամադրության տակ եղած տվյալների հիման վրա դրանց հասնելը լիովին հնարավոր է: Նիղեղանդների կառավարությունը մշակում է Օդի

որակի հարցերով համագործակցության ազգային ծրագիր՝ լուծելու համար արտանետումների առավելագույն սահմանաչափերի մշտական գերազանցումներ գրանցող վայրերի խնդիրներն այնպես, որ այդ վայրերում նույնպես օդի որակի չափանիշների հետ համապատասխանությունն ապահովվի նախատեսված ժամկետներում:

Նիդեռլանդների Թագավորությունն իր գոհունակությունն է հայտնում այն մասին, որ Խորհուրդը և Եվրոպական պառլամենտը երկրորդ ընթերցմամբ ընդունեցին Հրահանգի տեքստը այնպիսի ժամկետում, որը հնարավոր դարձրեց դրա ուժի մեջ մտնելը 2008 թվականին: Դա կարևոր է մեր ազգային ծրագրի համար, ինչպես նաև մեզ շրջապատող երկրներում իրականացվող գործողությունների առումով: Նիդեռլանդների Թագավորությունը կգործադրի բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու, որ համագործակցության ազգային ծրագիրը և բոլոր տեղական ու տարածաշրջանային միջոցները համապատասխանեն Հրահանգի համատեքստին:
